1894 ՓԵՏՐՎԱՐԻ 11 (23) ՈՒՐԲԱԹ

№ 17—ՏԱՍՆԵՒԵՐԵՔԵՐՈՐԴ ՏԱՐԻ—№ 17

Հրատարակվում է չորեքշաբթի, ուրբաթ և կիւրակի օրերը։
Տարեկան գինն է 10 ռուբլի, կէս տարուանը 6 ռուբլի.
3 ամսուանը 3 ռ. և մի ամսուանը 1 ռ.։
Առանձին համարը 7 կոպէկ։

Բաժանորդագրութիւնն ընդունվում է խմբագրատանը և Կենտրոնական գրավաճառանոցում։

Հասցէն՝ Тифлисъ, Редакція „Ардзаганкъ“.
կամ՝ Tiflis, Rédaction „Ardzagang“.

Խմբագրութիւնը բաց է ամէնայն օր 10—1 ժամ (բացի կիրակի և տօնի օրերից)։

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

1894 ՓԵՏՐՎԱՐԻ 11 (23) ՈՒՐԲԱԹ

ԱՐՁԱԳԱՆՔ

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

„ԱՐՁԱԳԱՆՔ“
ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ
ԼՐԱԳԻՐԸ
1894 ԹՎԻՆ

‹Արձագանքը› լոյս է տեսնում շաբաթը երեք անգամ—չորեքշաբթի, ուրբաթ և կիւրակի օրերը։

‹Արձագանքի› տարեկան գինը 10 ռ. է, կէս տարուանը—6 ռ., երեք ամսուանը—3 ռ., մի ամսուանը—1 ռուբլի։

Բաժանորդագրութիւնն ընդունվում է խմբագրատանը (Վելեամինովսկի փողոց, № 22, տուն Խանդամիրեանի) և ‹Կենտրոնական գրավաճառանոցում›։

‹Արձագանքին› օտար քաղաքներից գրուել ցանկացողները պէտք է դիմեն հետեւեալ հասցէով. Тифлисъ, Редакція газеты „Ардзаганкъ“. իսկ արտասահմանից՝ Tiflis, Rédaction du journal arménien ‹Ardzagang›.

Յայտարարութիւններ ընդունվում են թէ՛ հայերէն և թէ օտար լեզուներով։

Խմբագիր-հրատարակիչ՝
ԱԲԳԱՐ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

ԿԱԽԵԹՈՒ ԱՅԳԵՏԷՐԵՐԻ
ՆՈՐԱԿԱԶՄ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

յատուկ նպատակ ունենալով տեղական և ներքին Ռուսաստանի շուկաներին մատակարարել բացառապէս Կախեթու բնական գինիներ Ընկերութեան խաղողի այգիներից, սկսել է իւր գործունէութիւնը այս տարուայ փետրվարի 4-ից։

Էքսպօրտի, պարտիայով և շշերով առևտուրը կատարվում է Ընկերութեան պահեստներում և խանութներում, որոնք գտնվում են. 1) Միքայէլեան փողոցի վրայ, Ալիվիցկու տանը, 2) Երևանեան հրապարակի վրայ, Թամամշեանի քարավանսարայում։ (10—1)

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ծխական դպրոցների ծրագիրը։
Մի զրպարտութիւն։
ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. — Վեհափառ Հայրապետի հեռագիրը Թեմիս ս. առաջնորդին։ Պետերբուրգի նախկին ուսանողների հեռագիրը։ Արհեստներ սովորցնող դպրոց. կանոնադր. հաստատութիւնը։ Օդես. համալս. բժշկակ. բաժնի բացման թոյլտուութիւնը։ ‹Նովոյէ Աբազրենիէյ› մի սխալ։ Սիմէոն կաթողիկոսի կենսագրութեան առիթով։ Վանքի եկեղեցու երեքփոխանական 6-ամեայ հաշիւը։ Նամակ Ջաքաթալայից։ Նամակ Քարահունջից։ Կուրդանից։ Օձունից։ Ագրիբից։ Պ. Կայդանովի ճառը նախկին ուսանողների ճաշկերոյթին։ Բժ. Մելիք-Փարսադանեանի մահը։ Պետրովսկի գիւղատնտեսական ակադեմիայի գոցումը։ Բժիշկների համագգային ժողովը։ Ալէքսանդրապոլի ոստիկ. ծառայողների փոխ. խնայող. գանձ. կանոնադրութեան հաստատութիւնը։ Լեհական լեզուով ներկայացում։ Հայ թատրոնի ապագան։
ՄԱՄՈՒԼԻ ՏԵՍՈՒԹԻՒՆ
ՊԱՐՍԿԱՍՏԱՆ.—Ատրպատականի նոր առաջնորդը։
ՖԵԼԻԵՏՕՆ. — Սիմէոն կաթողիկոսի կենսագրութիւնը։ Ս. Սարգիս զօրավարի տօնի առիթով։
ՔԱՂԱՔԱԿԱՆ
ՀԵՌԱԳԻՐՆԵՐ
ԶԱՆԱԶԱՆ
ՏԵՂԵԿԱՏՈՒ
ՅՈՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԾԽԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ

Քանիցս առիթ ենք ունեցել մեր ծխական դպրոցների ծրագրի մասին խօսելու. այդ առիթները տուել են մեզ այն՝ տեղի ու անտեղի յարձակումները, որոնց պատճէշի յետևը անպատրաստ ու տգէտ ուսուցիչներ պահպանուել են միշտ։

Կատարելութիւնը մի նախատիպար է, որին պէտի ձգտենք միշտ, ուստի եղածից դժգոհ լինելը առհաւատչեայ է, որ ձգտում ենք դէպի կատարելութիւն։

Մեր ծխական դպրոցների ծրագիրների դէմ խօսողներ և յարձակուողներ շատ են եղել, սակայն քննողներ դեռ հանդէս չեն դուրս եկել։ Հեշտ քննադատութեան սիրահարները գիտեն միայն պարսաւել, իսկ քննել և թերութիւնները ցոյց տալ — այդ նրանց ոյժից բարձր է։

Լրագրական յօդուածներ, առանձին տետրեր և ընդհանուր գանգատներ շատ են լսուել, բայց այսօր զուր է մարդ փնտռում մի լուրջ գիտնական և մանկավարժական քննադատութիւն։

Կատարելութեան ճանապարհ հարթողը բանիբուն քննադատութիւնն է։

Այսօր Ս. Էջմիածնում պատահաբար կազմուած «ուսումնարանական յանձնաժողովը» բարւոք է դատել ծրագիր փոփոխելու ձեռնարկել։

Թէ ինչ շարժառիթներից դրդուած է այդ ձեռնարկութիւնը, մենք չը գիտենք, սակայն համոզուած ենք, որ այդ քայլը հետևանք է այն անորոշ տրտունջների, որ շատ անգամ լսուել են։

«Ուսումնարանական յանձնաժողովը» այդ մեծ գործը բաւական թեթև կերպով է կամենում գլուխ բերել։

Ծրագրի փոփոխութիւնն սկզբունքով վճռելու գործը կատարելուց յետոյ, նա հրամանագրել է, որ Վրաստանի թեմական տեսուչը ուսուցչական համաժողով կազմէ և ծրագիրներ պատրաստելով իրեն ներկայացնէ։

Վրաստանի թեմական տեսուչը ևս կատարել է այդ հրամանը. մի շաբաթ առաջ համախմբել է ուսուցիչներին և ուսուցչուհիներին, սկզբունքով մի քանի խնդիրներ է վճռել տուել և ապա իւր հրամանով մասնաժողովներ ու նախագահներ է է նշանակել ծրագիր մշակելու։

Արժանապատիւ թեմական տեսչի մի հրամանագիր պատուիրում է մասնաժողովների նախագահներին մինչև 15 օրուան մշակուած ծրագիրներ ներկայացնել իրեն։

Գործառնութեան այս եղանակը ցոյց է տալիս, որ գործին ձեռնարկողները որոշ գաղափար չունին ձեռնարկութեան մասին։

Ծրագիր կազմելը երկու կերպ կարող է լինել. 1) մի որևէ տիպարի դպրոցի համար նոր ծրագիր ստեղծել և 2) մի որոշ ծրագիր մշակել կամ վերամշակել։ Առաջին տեսակի գործի համար անձեռնհաս են ուսուցչական մասնաժողովները, իսկ երկրորդ տեսակին գալով բացի ենթադրելի անձեռնհասութիւնից երկար ժամանակի կարիք կայ։

Որքան մեզ յայտնի է, նոր ձեռնարկուած գործը երկու տեսակիցն էլ է։

Ինչպէս մեզ հաղորդում են, ընդհանուր ժողովում հայր տեսուչը հարկ է համարել մինչև իսկ խնդիր յարուցանել և «հարց շինել», թէ արդեօք «պէտք է եկեղեցական երգեցողութիւնը» կամ «կարևո՞ր է, որ ծխական դպրոցի սանները եկեղեցուն ծառայեն»։

Բացի սորանից առաջարկուած է նոյնպէս վարչական կազմակերպութեան և հոգաբարձական յարաբերութեանց ծրագիր ևս մշակել։

Ուսուցիչներին առաջարկուած է ուրեմն վերստեղծել մեր դպրոցական կանոնադրութիւնը։

Թէ ինչքան կարիք կայ արդեօք այս խնդիրների յարուցման և ո՞վ է դրա յարուցանողն ու պատասխանատուն, մենք չենք կամենում քննել. պէտք է նկատենք միայն, որ շատ տարօրինակ ձևով է կատարւում մի գործ, որ առանձին լրջութեան է կարօտ։

Ամեն մարդու համար մի պարզ ճշմարտութիւն է, որ վարչական յարաբերութիւնների կանոնները հազիւ թէ նրանք պէտք է մշակեն, որոնք պէտի ենթարկուին այդ կանոններին։

Նոյնպէս պարզ է և վիճաբանութեան տեղիք չէ կարող տալ այն, որ ուսուցիչը ծրագրի գործադրողն է, երբեմն լաւ և երբեմն վատ. իսկ ծրագրի կազմելուց մինչև գործադրելը ահագին վիհ կայ։ Որմնադիրը ճարտարապետի պաշտօն չէ կարող կատարել և եթէ կատարեց էլ, նրա շինած տունը գիւղական տրնից աւելի բարդ ճարտարապետութիւն չի ունենայ։ Կան որմնագործներ, որոնք ճարտարապետ են դարձել, բայց ամեն որմնագործ ճարտարապետ չէ։

Թէ ինչպէս պէտի ծրագիր կազմեն արդէն նշանակուած մասնաժողովները, մեզ անյայտ է, բայց որ նրանց արած գործը շատ կիսկատար կը լինի, դրան առհաւատչեայ է նրանց կազմակերպութիւնը և սուղ ժամանակը։

Ո՞վ է ծրագիրներ յօրինում այլ՝ մեզնից լուսաւոր ազգերի մէջ. ինչպէս են փոփոխւում այդ ծրագիրները և ինչպէս են կազմւում, արդեօք այդ հարցը տուե՞լ է իրեն «ուսումնարանական յանձնաժողովը»։

Ծրագիրներ մշակելու համար մասնագիտական հմտութեան հետ պէտք է անհրաժեշտ կերպիւ միացած լինի փորձառութիւնն ու այլ դպրոցական հաստատութիւնների ծանօթութիւնը։ Հմուտ մասնագէտներ, որոնք և մանկավարժ են, պէտք է ծանօթ լինին նորագոյն դպրոցական տիպարներին, ունենան ձեռքի տակ բազմաբովանդակ պաշտօնական և ազատ քննադատութիւններ և երկար ժամանակ, որ կարող լինին ծրագիր մշակել։

Այսքան տարի է գործ դրուող ծրագիրներն ընդհանուր փորձառւթեր են (ինչպէս՝ «քերականութիւն» «բնագիտութիւն ցվերջ» և այլն). նախ պէտք էր այդ վերլուծել, ընդարձակել և նիւթ հաւաքել գործադրութեան մասին և ապա ծրագրի մշակութեան խնդիր յարուցանել։

ՄԻ ԶՐՊԱՐՏՈՒԹԻՒՆ

Շատ ցաւում ենք, որ Յովնանեան օրիորդաց դպրոցի հոգաբարձութիւնը այն թիւր համոզմունքն ունենալով, որ զրպարտանքը կարելի է միայն արհամարհանքով յաղթել, կատարեալ լռութիւն է պահպանում մինչև այժմ և հանդէս չէ գալիս «Մշակ» լրագրի այն անհիմն, անբաբեխիղճ, զրպարտութիւններով լի յարձակումների դէմ, որ պ. Քալանթարեանի օրգանը գործում է դըպրոցի, տեսչի, ուսուցչական խմբի և հոգաբարձութեան դէմ։ Հոգաբարձութեան անդամները մոռանում են սակայն և մենք թելադրուած ենք համարում մեզ յիշեցնելու նոցա, որ «զրպարտութիւնը ածուխ է նման— եթէ չէ այրում, գոնեա սևացնում է». մոռանում են Վօլտերի այն խօսքը, թէ «զրպարտութիւնը թռչում է ամենամեծ արագութեամբ»։

Մեզ ասում են, թէ պ. պ. Ճահպարոնեան, Անանեան և Հաքիմեան կարծում են թէ «Արձագանքը», կատարելով իւր հրապարակախօսական կոչումը, արդէն իսկ հերքել է «Մշակի» անճիշդ, անհիմն և ուրեմն անարդար մեղադրանքները, մերկացրել է հասարակութեան առաջ այդ թերթի անարգ շարժառիթները։ Սակայն մենք պէտք է նկատենք, որ մի լրագիր այսպիսի խնդիրներում, պաշտպանելով այս կամ այն հիմնարկութեան պատիւը, բարի անունը, կարող է միայն ընդհանուր փաստերի, խղճի պատուէրների, տրամաբանական օրէնքների վրայ հիմնուել. նորան կարող են նպաստել իր յանձն առած գործում հակառակորդի հակասութիւնները, որոնց մէջ ընկնում է ամեն մի անարդար դատ պաշտպանող։ Բայց միայն հաստատութեան ղեկավարներն են կարող՝ գործին ամենամօտ կերպով ծանօթ լինելով, ձեռքի տակ վաւերագրեր, թուանշաններ ունենալով, դիւրին կերպով հերքել մի շարք մեղադրանքներ և այս հերքումը դարձեալ կարող է ժամանակին նիւթ մատակարարել ճշմարտութիւնը պաշտպանող թերթին։

Մի զրպարտութեան հերքում, որ այս յօդուածի նիւթն է, ամենալաւ կերպով կըպարզէ մեր յայտնած մտքի ճշմարտութիւնը։

Պ. Քալանթարեանը կամենալով ապացուցանել իր պարզամիտ ընթերցողներին, որ տեսուչը և ուսուցչական խումբը «իրենց դերում չեն», առաջ էր բերել, ի միջի այլոց, բարձրահնչիւն ֆրազներով համեմած հետևեալ փաստը (?!)։

«Ունենալով տարեկան 20—25 (?!) հազար եկամուտ, Յովնանեան դըպրոցը պէտք է բոլոր աշակերտուհիներին ձրի ընդունէր։ Բայց դրա փոխարէն այդ դպրոցի վարչութիւնը շատերից թոշակ է վերցնում 27 ռուբլի։ Այդպիսով ուրեմն աղքատ երեխաները, որոնք ամենից աւելի իրաւունք ունէին տեղ գտնելու Յովնանեան դպրոցում, դուրս են մնում և զրկվում են և ուրիշ ընդունվում են նրանք, որոնք կարող են վճարել տարեկան մօտ 30 ռուբլի»։

Այս տողերին մենք պատասխանել էինք.

‹Ի՞նչ կարող է անել ուսուցչական խումբը իւր տեսչով հանդերձ, որպէսզի դպրոցը բոլոր աշակերտուհիներին ձրի ընդունէ։ Չէ որ նոյն իսկ դուք, չիշեալ պարբերութեան մէջ գործ էք ածել ‹վարչութիւն› խօսքը. դուք խոստովանում էք ուրեմն որ վարչութիւնն է առնում 27 ռուբլի ուսումնավարձը. արդ ասացէք ի սէր Աստուծոյ, ուսուցչի ընտիր կամ վատ լինելն ի՞նչ կապ ունի աշակերտուհիներին ձրի կամ ոչ-ձրի ընդունելու խնդրի հետ›, ապա օրինակներով պարզել էինք մեր միտքը (‹Արձագանք› № 14)։

Այսպէս ուրեմն մեր պատասխանի մէջ մենք հիմնվում էինք ընդհանուր փաստերի, տրամաբանական օրէնքների վրայ։ Բայց արի տես որ «Մշակի» հաստատութիւնը թէ «Յովնանեան դպրոցի վարչութիւնը շատերից թոշակ է վերցնում 27 ռուբլի, թէ «աղքատ երեխաները դուրսն են մնում և զրկվում են և ունևոր ընդունվում են նորանք, որոնք կարող են վճարել տարեկան մօտ 30 ռուբլի» — ինքն ըստ ինքեան մի զրպարտութիւն է։ Մենք պատահաբար, բայց ամենաճիշդ աղբիւրներից տեղեկացանք, որ վճարող աշակերտուհիների թիւը այդ դպրոցում երբէք 42 ից չէ անցել, իսկ այս տարի դոցա թիւն ընդամենը 39-է։ Այսպէս ուրեմն 360 աշակերտուհիներից միմիայն 39-ն են փող վճարում, այսինքն 15%, իսկ 85 տոկոսը ձրիավարժ են, և ահա պ. Քալանթարեանը, որ թուաբանութեան պէտք է ծանօթ լինի, չէ խղճահարվում լոյս ցերեկով, հրապարակաբար պնդել թէ դպրոցի վարչութիւնը շատերից թոշակ է վերցնում, թէ աղքատները զրկուած են, և այլն։

Որքան և աղքատների պաշտպան ձևանայ պ. Քալանթարեանը, այնու ամենայնիւ նա չի զրկիլ շատ թէ քիչ ունևորին իւր զաւակին Յովնանեան դպրոցը տալու իրաւունքից, նա չի զրկիլ այդպիսի պարտաճանաչ ծնողին իւր զաւակի ուսման համար տարեկան 2700 կոպէկ հատուցանել զգալու պարտաւորութիւնից։ Ի՞նչ զարմանք ուրեմն, որ Թիֆլիզում գտնուել են 39 ծնող, որոնք կամենալով իրենց դուստրներին դաստիարակել պ. Վարդանեանի պէս հմուտ մանկավարժի տեսչութեան յանձնած դպրոցի մէջ, մի թեթև պարտաւորութիւն են համարել իրենց ունեցածից զաւակի կրթութեան համար օրական 2700:365=8 կոպէկից էլ մի բան պակաս ծախսել։ Էլ չենք ասում որ ունևոր աշակերտուհիներից ստացած դրամի մի մասը ծառայում է, ինչպէս լսել ենք, չքաւոր աշակերտուհիներին ձրի նախաճաշիկ տալու և այլն։

Միթէ ներելի է, որ այսպիսի զըրպարտութիւն ամբողջ երկու շաբաթ տարածուի հասարակութեան մէջ և առանց հերքման մնայ զրպարտուած հաստատութեան ղեկավարների կողմից։

Ո՛չ, մենք պնդում ենք, մենք, իբրև մեր ազգային հաստատութիւնների պատուին նախանձախնդիր, պահանջում ենք, որ Յովնանեան դպրոցի հոգաբարձութիւնը խզէ իւր լռութիւնը և հերքէ «Մշակի» զրպարտութիւնները, պաշտպանէ՝ համարեա թէ բացառապէս օրիորդներից բաղկացած ուսուցչական խմբի պատիւը այն մարդկանց դէմ, որոնց կարծիքով «հայ կինը մի զբաստանման էգ է» («Մշակ»), թոյլ չտայ որ բարեխիղճ տակ Յովհաննէս Յովնանեանի հիմնած դպրոցի բարի անունը ոտնակոխ անեն։

Հոգաբարձութիւնը այնպիսի փաստերով և թուանշաններով է զինուած, որ իւր այս սրբազան պարտաւորութիւն կատարելը նորա համար մի դիւրին գործ է։

Ուրեմն՝
‹Թող լռէ մունջը, անդամալոյծը›…

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Ամենայն Հայոց Կաթողիկոսի դիւանի կառավարիչ Խորէն Ծ. վարդապետը փետրուարի 9-ին ուղարկել է Վեհափառի հրամանով սրբազան Գէորգ եպիսկոպոսին հետևեալ հեռագիրը.

«Նորին Վեհափառութիւնն այսօր հեռագիր ստացաւ ներքին գործոց պ. նախարարից, որ Թագաւոր-Կայսրը Բարձրագոյն հաստատել է ձեզ։ Նորին Սրբութիւնը օրհնում է ձեզ, ցանկանալով յաջողութիւն ձեր սրբբաղնութեան ծանր ասպարիզում։ Շուտով ձեր գերապատւութեան կ'առաքուի կոնդակը»։

* * *

Փետրվարի 8-ին Պետերբուրգի համալսարանի նախկին ուսանողներն ուղարկեցին Պետերբուրգի ռեկտորի անունով հետևեալ հեռագիրը.

«Պետերբուրգի համալսարանի նախկին սաներս միւս բարձր ուսումնարանների ուսանողների հետ միասին հաւաքուել ենք հեռաւոր Կովկասում՝ տօնելու թանկագին համալսարանի՝ մեր մեծ հայրենիքին մատուցած փառաւոր ծառայութեան եօթանասուն և հինգ ամեայ տարեդարձը։ Նախկին ուսանողների մտերմական շրջանում բարձրացնում ենք կենաց բաժակն և առաքում ենք մեր ջերմ իղձերը վասն բարգաւաճման մեր համալսարանի՝ ուսմանց, մտքի և զարգացման փառաւոր ասպարէզում։ Երկրորդ բաժակը ռեկտորին, պրոֆեսօրներին և ամեն հին և նոր ուսանողներին»։

* * *

Տէրութիւնը հրատարակել է արհեստներ ուսանող աշակերտաց համար հիմնուելիք դպրոցների կանոնադրութիւնը։ Այս դպրոցները սահմանւում են արհեստները գործնականապէս ուսումնասիրելու համար և բաղկանում են երեք դասատուններից, որոնց ծրագիրը հաստատում է ազգային լուսաւորութեան նախարարը համաձայն տեղական պայմանների և յարմարեցնելով զանազան մասնագիտութեանց։ Այս դպրոցներում լինելու են մի տեսուչ (հազար ռուբլի ռոճիկ և բնակարան), կրօնուսույց, երկու վարժապետ, բժիշկ, վարպետ և վարպետի օգնականներ։

* * *

Օդեսայի համալսարանն արդէն թոյլտուութիւն է ստացել բժշկական բաժին բանալ և հաւանական է որ սեպտեմբերից արդէն սկսուեն պարապմունքները։ Քաղաքային վարչութիւնը իւր կողմից յատկացրել է այդ նպատակին 250 հազար ռուբլի փող։

* * *

Տեղւոյս ‹Նովոյէ Աբազրենիէ› լրագիրը հաւորդել էր որ ներկայ փետրուար ամսին Թիֆլիզի փակուած օրթօդօքս հոգևոր սեմինարում վերսկսուելու են պարապմունքները։ Այժմ պաշտօնական ‹Կավկազ› լրագիրը հաղորդում է, որ այդ լուրը միանգամայն անհիմն է։

* * *

Արժանապատիւ Գիւտ քահանայ Աղանեանցի սիրալիր համաձայնութիւնն ստանալով ներկայ համարից սկսում ենք տպել նորա աշխատասիրած «Սիմէոն կաթողիկոսի կենսագրութիւնը», որ կազմելու է «Դիւան հայոց պատմութեան» կարևոր ժողովածուի երրորդ գրքի ներածութիւնը։ Այս երրորդ գիրքը, որ ի մօտոյ լոյս պէտք է տեսնէ, պարունակում է մեծ հայրապետի ընդարձակ յիշատակարանը։

* * *

ՎԱՆՔԻ ԵԿԵՂԵՑՒՈՅ ԵՐԵՑՓՈԽԱՆԱԿԱՆ 6-ԱՄԵԱՅ ՀԱՇԻՒԸ

(Նամակ Խմբագրութեան)

‹Արձագանքի› անցեալ համարներից մէկում մի լուր կար տպուած, որ վերջին տարուայ վանքի եկեղեցւոյ հաշիւները տեսնուած չեն։ Այդ առիթով աւելորդ չենք համարում մի քանի խօսք ասել որպէս վանքի ծխական։

Պէտք է ասել, որ վանքի հաշիւները

ոչ թէ մի քանի տարի միայն, այլ վեց թէ եօթն տարի է, որ տեսնուած չեն, այսինքն պ. Իսահակ Բուդաղեանցի ամբողջ երեցփոխութեան ընթացքում։ Լաւ յիշում ենք, որ երբ նորա պաշտօնավարութեան առաջին երեք տարին վերջացաւ և ծխականների ժողով կայացաւ նոր երեցփոխանի ընտրութեան համար, ծխականներից մի քանիսը վըստահութիւն ունեցան ժողովի նախագահ Հ. Ղևոնդ ա.ք. Խարազեանից պահանջելու, որ նա նախ ներկայացնէ երեցփոխանի երեքամեայ հաշիւներն ու ապա ընտրութիւն կայացնէ։ Տէր հայրը ուշք չդարձրեց ժողովրդականաց այս պահանջի վերայ և պատասխանեց, թէ Մամբրէ սրբազանը հաշիւները տարել է իւր մօտ։ Ժողովուրդը քաջ գիտէր, որ երեցփոխանի եռամեայ հաշիւները մինչև անգամ մուծուած չէին մատեանների մէջ և հանգուցեալ Մամբրէ եպիսկոպոսի ստիպմամբ հազիւ գրուեցան։

Այնուհետև մի նոր երեք տարի անցաւ, ծանր ժամանակներ էլ բարդուեցան պ. Բուդաղեանի համար, բայց ոչ հաշիւ կայ, և ոչ իսկ՝ չար լեզուների առելով, մատեաններն են գրուած։ Մինչդեռ ամեն մի հասարակական պաշտօնէի անմիջական պարտքն է հաշուետուութիւնը, այլ մանաւանդ երեցփոխանի համար, որի պարտականութիւնը այսպէս է գծում Ռուսաստանի Հայոց եկեղեցական կառավարութեան կարգադրութեանց 125-դ յօդուածը։

«Ի լրանալ ամի, եկեղեցպանն կամ երեցփոխանն պարտապան է առաջի ընդհանուր ժողովոյն հասարակութեան տալ գլխակատար հաշիւ ամենայն գործողութեանց իւրոց ի մասին կառավարութեան տնտեսական գործոց եկեղեցւոյն, և մանաւանդ ի մասին գանձանակացն սահմանելոց յառանձին արկեղ, և ապա առաջի առնէ զայս հաշիւ իւր լուսաւորչական Հայոց վիճակային կոնսիստորիային՝ որում և պատկանի»։

Վանքի աւագ եկեղեցին, որ ինչպէս իւր դիրքով, որպէս առաջնորդանիստ եկեղեցի, նոյնպէս և ծխի բազմամարդութեամբ, ունենալով առաւել քան 900 տուն ծուխ, տակաւին չկարողացաւ իւր բարեզարդութեան ու հաշուետուութեան գործը այնպիսի վիճակի մէջ դնել, որ օրինակ լինէր թէ քաղաքիս և թէ մանաւանդ գիւղական եկեղեցիների երեցփոխանների համար։

Յուսանք, որ թեմիս սրբազան առաջնորդի հաստատուելով վերջապէս կարգի կ'ընկնի Վանքի եկեղեցւոյ հաշիւները։

Ծխական։

9 փետր. 1894 թ.
Թիֆլիզ։

* * *

ԶԱՔԱԹԱԼԱ, փետրվարի 6-ին.

(Թղթակցութիւն «Արձագանքի»)

—

Դաղստան ազգի Զաքաթալում վերջին ժամանակներս մի քանի արտաքոյ կարգի երեւոյթներ են տեղի ունենում, որոնք վրդովում են ժողովրդի անդորրութիւնը։

Մի քանի ամիս առաջ լոյս էին ընկել որոշ կարգի գողեր, որ կտրում էին յատկապէս մառաններ ու խոհանոցներ և տանում էին անխտիր ամեն բան՝ Սղնախի ամենապատուական լոբուց ու գինուց, սկսած մինչև ամենաթանկագին ընդեղէններն ու իրերը. իսկ վերջերս այդ պատուելի և բարեխիղճ ձուագողերը, կատարելագործուելով իրանց ասպարիզում ձիագողեր են դարձել և ամսոյս 4-ին գողացել մի խեղճ հայ այրի կնոջ միակ կովը։ Միւս օրը այդ խեղճ այրին հաւաքած իւր մանր մունր որբիկներին, արտասուքը աչքերին, դիմում է տեղւոյս գաւառապետին, հետևեալ խօսքերով.«Ա՛ղա-ջան, քու. արևին մատաղ, մի քանի ամիս առաջ եկան խոհանոցս կտրեցին, հաւաքեցին ունեցած չունեցածս տարան. ասացի ջահանդամը, մի կերպ եօլա՜ կըգնամ, հիմի էլ եկել են էս՞բալէքս պահող կովին են տարել, բա՛ այսի հետ ինչպէս պահեմ սրանց ..»։

Թողնելով այլ և այլ մանրամասնութիւնները, այս կասեմ միայն, որ սա առաջինը և վերջինը չէ, այլ մի քանիերորդ դէպքը։

Այստեղ մի խումբ կատաղած շներ էին թափառում, որոնք այնպիսի սարսափ էին ձգել բնակիչների վերայ, որ ոչ ոք չէր կարողանում վստահ տնից դուրս գալ, և ոստիկանութիւնը հետամուտ չեղաւ կոտորելու, մինչև որ այդ կատաղի գազանները տարան իրենց անտեղի զոհը, կծելով մի 12 տարեկան տղայի, որի համար թէպէտ և տեղւոյս բարեգութ հասարակութիւնը փող ժողովեց, Տփխիս ուղարկեց բժշկուելու, սակայն դեռ ևս Տփխիս չհասած վախճանուում է չարաչար մահով։

Ա—օ։

* * *

ՆԱՄԱԿ ՔԱՐԱՀՈՒՆՋԻՑ

—

Պ. Խմբագիր.

Խնդրում ենք բարեհաճել ձեր լրագրի մօտիկ համարներից մէկում տեղ շնորհել սոյն մեր երկտող գրութեանը։

Քարահունջ գիւղի հոգաբարձութիւնս մօտ օրերս ամենայն ուրախութեամբ ստացաւ բազուբրնակ պ. Առաքել-աղայ Ծատուրեանի՝ իւր եղբօր միջոցով ուղարկած 200 րուբլի փողը, որ ուղարկել է յատկապէս երկրորդ ուսուցիչ վարձելու համար։

Ուստի այսու՛իմով հոգաբարձութիւնս թէ իւր և թէ գիւղի ամբողջ հասարակութեան կողմից խորին շնորհակալութիւն է յայտնում իւր հայրենակից մեծապատիւ բարերարին։ Ընդ սմին յիշում ենք և այն՝ որ պ. Ծատուրեանը առաջին անգամը չէ, որ իւր ծննդավայր գիւղին արժանացնում է իւր առատաձեռն նուիրաբերութիւններին։ Վերջին ժամանակս նա սկսել է և իր ուշադրութիւնը կենդրոնացել գիւղի մատաղ սերնդի կրթութեան գործի վրայ, և այդ առթիւ ուրախութեամբ շտապում ենք լսելի անել հայ հասարակութեանը այն, որ մեծ. բարերարը որոշել է գիւղումս իւր հաշուով դպրոց բանալ։ Ի սրտէ ցանկանում ենք յաջողութիւն։

Հոգաբարձութեան նախագահ՝
Մահտ. [illegible] Գէորգ-Բէգեանց։
Անդամք՝
Առաքել Յաքոբջանեան.
Մաթէոս [illegible]։

1 Փետր. 1894 թ.

* * *

ԿՈՐԴԱՆԻՑ (Լօռւայ վիճակ) մեզ գրում են.— Լօռւայ մեր սահմանակից մօտիկ գիւղերում տարածուած է մի անիծուած ցաւ, որին տեղացիները «ֆրանկի» հիւանդութիւն են ասում («սիֆիլիս). ամբողջ ընտանիքներ կան դորանով վարակուած. դոցա աղջիկերքն էլ ուրիշ ընտանիքների հարս գնալով, նոցա ևս վարակում են, այդպիսով դա հետզհետէ համաճարակ բնաւորութիւն է ստանում։ Այժմ շատ տեղ կը տեսնէք այդ ցաւի ողորմելի զոհեր—նրանց քնթի կամ երեսի վերայ ունեցած այլանդակ արտաքին նշաններով, չենք յիշում ներքինը։ Այս հիւանդութիւնից նշաններ են երևում և՛ Լօռւայ ներքին գիւղերում։ Ցանկալի կը լինի, որ բժշկական խիստ միջոցներ գործածուէին այդ ցաւի առաջն առնելու և վարակուածներին բժշկելու. հոգևոր իշխանութիւնը ևս լաւ կ'անէ, որ այսուհետև վարակուած ընտանիքների ամուսնական կապը չթոյլատրէ։

* * *

ՕԶՈՒՆ գիւղից մեզ գրում են.— Այստեղ հաստատ լուր է տարածուել, որ Մարցայ ընդարձակ կալուածքի դատը վերջացել է և մեր եկեղեցու օգտին էլ վճռուել է բաւականաչափ տեղ։ Ի նկատի ունենալով այն հանգամանքը, որ այդ տեղը գնել է Օձնայ Սիմէոն եպիսկոպոսը յօգուտ Օձնայ եկեղեցւոյ, այստեղ միտք է յղացել դիմելու Վեհափառ Հօրը, որ այդ կալուածքի եկամուտից մեծ մասը տրուի իրանց եկեղեցուն, որ և ամբողջովին գործ կ'ածուի գիւղական ուսումնարանի պահպանութեան վերայ։

* * *

ԱԶՆՐԻՑ (Լօռւայ գաւառ) գրում են մեզ.— Գիւղի մօտն է գտնուում Լեղուարի անդնդախոր «Զաղրելաձոր» կոչուած ձորը, որտեղից սկիզբն է առնում Մեղուի վտակը։ Այս վտակի վրայ, ուր ձախ ափից Զորոգետի հետ է խառնուում, հնուց մի ամրակառոյց քարաշէն կամուրջ է գտնուում, որի վրայով է լինում Ղազախի, Բորչալուի, Լօռւայ, Փամբակի և այլ տեղերի միակ ճանապարհային հաղորդակցութիւնը։ Այս վտակը, շնորհիւ Լեղուարի ջրառատ յատկութեան, սարսափելի մեծանում է, մանաւանդ գարունքները, որով և բաւականին ժամանակ գիւղերի հետ եղած յարաբերութիւնն ընդհատուում է, պատճառ որ յորդացած ջուրը, կամրջից վերև փորելով, մի այլ ուղղութիւն է ստանում և կողքով մեծ լայնութեամբ անցնում։ Այդ վտակի ջրի հոսանքի ուժը այնքան զօրեղ է լինում, որ Զորոգետի մեծ ջուրը կտրում է և խառնուելատեղը աճաղին քարակոյտ կազմում։ Շատերը ճանապարհորդներից, սրտատութիւնից ստիպուած, ցանկացել են անցնել յորդացած ժամանակ, բայց ջրի կուր են եղել։ Մի քանի ժամանակ առաջ Լօռւայ պրիստաւի կարգադրութեամբ աշխատեցին կամրջից վերև պատ քաշել և ջուրը կամրջի տակն անել, միայն բոլորովին չյաջողուեց, որովհետև շինութիւնը հաստատ չեղաւ։ Այժմ շատ լաւ կը լինի, որ Օձնեցիք, Ազորուեցիք, Հաղպատեցիք, Սանահնեցիք, Մադանեցիք և թէ միւս գիւղերը տնազլխի փող ժողովեն, այն ևս չափաւոր, և մի հիմնաւոր պատ շինեն և վտակին իւր առաջուայ ընթացքը տան։ Այս գործը գեղեցիկ կերպով գլուխ կը գայ, եթէ գիւղական տանուտէրերը միմեանց մէջ համաձայնութիւն կայացնեն։

* * *

Գ. ԿՕՑՊԱՆՈՎԻ ՃԱՌԸ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՀԱՑԿԵՐՈՅԹԻՆ

—

«75-ամեակը մի կարճատև ժամանակ է համալսարանի կեանքի համար։ Գերմանիայում, Իտալիայում, Ֆրանսիայում կան համալսարաններ, որոնք տօնել են իրենց 400 ամեակը։ Հիւսիսային Ամերիկայում կան համալսարաններ, որոնք Պետերբուրգի համալսարանից շատ աւելի նոր են. սակայն նրանք մի համակրելի յատկանիշ ունին,—այդ է սերտ յարաբերութիւնը ժողովրդի հետ. բացի գիտնական կրթութիւնից՝ Ամերիկայի պրոֆեսորներն ուշադիր են հասարակային կարիքներին. այս տեղից է առաջ եկել համալսարանի և ազգի մէջև տիրող կապը. հասկանալի է, որ այնտեղ նուիրաբերութիւնները յօգուտ ազգային կրթութեան առատ ձեռքով են կատարվում. Բալտիմօրայի համալսարանի օգտին ամերիկացիք $3^1/_2$ միլիոն դոլլար ընծայեցին։ Հարկաւ մենք այդպիսի բան երազել անգամ չենք կարող, սակայն և մեր մէջ սիբիրցիք իրենց հաշուով հիմնեցին Տօմսկի համալսարանը և առատ առատ նուէրներ տուին։ Մոսկվայի համալսարանի 125 ամեակը Թիֆլիզում տօնելիս՝ Թիֆլիզի քաղաքային ինքնավարութիւնը որոշեց տարէց տարի 10-կան հազար րուբլի յատկացնել Կովկասեան համալսարանի կառուցման։ Շատ ցաւալի է, որ այդպիսի կազմուած դրամագլխից փոխարինաբար գումարներ են վերցուել քաղաքի ուրիշ պէտքերի համար։ Պէտք է յուսալ, որ այդ լուման չի նուազիլ և մենք չենք զրկուիլ Կովկասում մի համալսարան տեսնելու ակնկալութիւնից։ Սակայն առ ժամանակ մեզ հարկաւոր է օգնութեան աջ մեկնել օգնութեան կարօտ ուսանողներին։ Մի քանի տարի առաջ Թիֆլիզում մի համալսարանական հացկերոյթի ժամանակ մենք՝ թուով տասնևերկու հոգի՝ անդամ գրուեցանք կարօտեալ ուսանողներին նպաստելու կոչուած ընկերութեան, բայց, ափսո՜ս,—անցաւ մի քանի տարի, և ահա, օրինակի համար, 1892 թ. տեղեկագրի մէջ ես չեմ գտնում այլ ևս այն բաժանորդների անունները։ Կշտամբելու մտքով չեմ ասում այս. այդ բանն առաջ է եկել ի հարկէ ոչ թէ համակրութեան կամ միջոցների պակասութիւնից, այլ լոկ մոռացութիւնից և կամ ուրիշ պատճառներից։

«Մէ՛ մոռանաք, ընկերներ, ձեր կարողութեան չափով օգնութիւն հասնել կարօտեալ ուսանողներին։ Մի ուրիշ հնար էլ կայ դիւրացնելու նրանց վիճակը. այդ է յիշեցնել ուսանողական պարտապաններին, որոնցից շատերն այժմ նիւթապէս լիովին ապահովուած մարդիկ են, թէ նրանք հատուցանելու պարտք ունին, և այդ պարտքը 166 հազար ռուբլուց աւելի է։

«Որ բարձրագոյն կրթութիւնը մեզանում յայտնի կերպով առաջադիմում է և որ նրան ընծայուող համակրութիւնն հետզհետէ աճում է, այդ բանին ես համոզուել եմ, ասաց վերջ ի վերջոյ Վ. Ի., մեր համալսարանի յոբելեան տօների միջոցին, որոնց ես արդէն երրորդին եմ մասնակցում։ Առաջին 25 ամեակ յոբելեանի հանդէսին ես ներկայ էի 1844 թ. Եարոսլաւում, մենք՝ համալսարանի հին ուսանողներս միայն երկու հոգի էինք. մեզ միացաւ և մի ինժեներ, և մենք երեքս տօնեցինք յոբելեանը, որ ի դէպ ասել, միայն այն օրն էր մ միտքն ընկնել հետևեալ յոբելեա ողջունեցի Թիֆլիզում. մենք հա քուեցանք ճաշի՝ թուով մօտ Հոգի մեր երիցագոյն ընկեր՝ հ գուցեալ Մակսիմովիչի նախագահ թեամբ։ Վերջապէս մեր այս որ յոբելեանի հանդէսը, ինչպէս տե նում ենք, իրօք ընկերական ը տորութիւն ունի, և մեր թիւն գէն 100-ից աւելի է։ Յուսամ ձեզանից մեծագոյն մասը 100 ա յոբելեանին էլ արժանանայ, և ժամանակ դուք հաւանական աւելի մեծ համակրութեան ակ տես լի իք՝

«Պարպում եմ բաժակս ի բարգ ճումն Պետերբուրգի համալսա և յարևշատութիւն կարօտեալ սանողներին նպաստելու պատր անձանց։»

* * *

ԿԱՐՍՈՒՄ վախճանուել է՝ վարակ լով հարինքից հիւանդներին դալման միջոցին, բժիշկ Մելիք-Փարսադանեա հանգուցեալը 1884 ին աւարտելո ուսման ընթացքը, ծառայում էր Թիֆլիզի քաղաքային հիւանդանոց ապս Սալիան, իսկ 1886-ից Կարսայ դաբային բժշկի պաշտօն էր վա Մելիք-Փարսադանեանցը վախճանուե գոհ գնալով պարտաճանաչութեան կ մունքին իւր երիտասարդական 34-ա հասակում։

* * *

«Հիւս. գործակալութիւնը» հա ղում է, որ փետր. 3-ին Պետրովսկի գիւղատնտեսական կադեմիան վերջնականապէս ցուած է։ Այս տարուայ աշնանը փոխութիւնների ենթարկած դպրոցական հաստատութիւնը ցուելու է «Մոսկվայի գիւղատնտեսական ճեմարան»։

* * *

Ազգային լուսաւորութեան նախ րարութիւնը յայտնում է որ 18 թուի մարտի 29-ին (ըստ Ն. ապրիլի 25-ին) Հռոմում գում րուելու է բժիշկների XI-դ միջա գային ժողովը։ Այն անձինք, որո ցանկանում են այս համագումար ղովին մասնակցել, պէտք է դի ժողովի քարտուղար՝ E. Marag պրոֆեսորին (Instituto di Cli Medica, Ospedale Pammato Genova)։

* * *

Ներքին գործոց պ. Նախարարը հ տատել է Ալէքսանդրապոլի ոստիկան թեան ծառայողների փոխատու-խնայողա գանձարանի կանոնագրութիւնը։

* * *

ՖԵԼԻԵՏՕՆ

ՍԻՄԷՈՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Ա.

ԺԸ. ԴԱՐՈՒ ՎԵՐՋԻՆ ԿԷՍԸ

Օսմանցւոց և Պարսից մէջ տեղի ունեցած երկարամեայ պատերազմները Հայաստանի տիրապետութեան համար դադար առան վերջապէս 1746 թուին և այդ հաշտութեամբ մեր երկրի ամբողջ Արևելեան մասը մինչև Երևան ու Նախիջևան մնալով պարսից ձեռքը՝ մնացեալն Օսմանեան պետութեան հպատակ մնաց։ Սուլթան համիդի ժամանակից, երբ վրաց Հերակլ արքան լեզգիների խանի դուստրն առաւ ի կնութիւն իւր որդու Գէորգի խանին, Երևանի խանի իշխանութեան ենթարկուած բոլոր երկիրը իւր շրջակայ գիւղերով անցաւ վրայ տէրութեան ձեռքը և վերջինս իւր իշխանութիւնն ընդարձակեց մինչև Երասխ գետը և մինչև Ս. Էջմիածին. այդ նորանուաճ երկրի իշխանները թէպէտ և ըստ առաջնոյն պարսիկներից էին լինում, բայց հարկ էին տալիս վրաց և նոցա հրամանովն էին նշանակւում։

Եւ այսպէս Հայաստանը բաժանուած էր երեք տէրութեանց մէջ Օսմանեանց ձեռքին էր մեծ մասը, այն է Փոքր Հայքը, Մեծ Հայքի արևմտեան և հարաւային մասը և Հայաստանին միացեալ երկիրները։ Մեծ Հայքի արևելեան մասը ենթարկւում էր Պարսից, իսկ հիւսիսային մի փոքր մասը վրաց։

Օսմանեանց մասը բաժանուած էր նահանգների կամ փաշայութիւնների, որոց իւրաքանչիւրում նստում էր մի մի փաշայ և կառավարում էր դոցա ձեռքով. շատ տեղ իշխում էին ուղղակի քիւրդ բէկեր կամ աղաներ, որոնք գրեթէ անկախ էին թէ պետութիւնից և թէ փաշաներից, այլ միմիայն նշանաւոր դէպքերում դիմում էին վերջիններիս և հարկ էին տալիս սոցա. կային նմանապէս այնպիսի բէկեր, որոնք բոլորովին անկախ էին ու ապստամբ և վարում էին իրանց իշխանութիւնը որդէցորդի։ Դոցա թիւը բաւական մեծ էր։

Այդպիսի փաշաներ կային Կարնոյ, Բայազիդի, Կարսի, Ախալցխայի, Տիգրանակերտի և Վանի վիլայէթներում կամ նահանգներում Մեծ Հայքի մէջ, և Սեբաստիայի, Կեսարիայի կամ Գայսերիի, Նիկսալի և Մալուղիէի նահանգներում՝ Փոքր-Հայքի մէջ։

Պարսից մասը, այն է՝ Կորճայքը, Պարսկահայք, Փայտակարան, Սիւնիք, Վասպուրականի արևելեան մասը, Արցախի և Այրարատի մեծագոյն մասը, կառավարւում էր խաների ձեռքով, որոց մէջ գլխաւորներն էին Երևանի, Նախիջևանի, Գանձակի, Շիրուանու և Խոյի խանները։ Սոցանից յետոյ երկիրս կառավարւում էին նոցա ստորադրեալ գաւառապետներն ու քեալանթարները, որոնք նշանակւում էին անմիջապէս թագաւորից. առաջին կարգի քեալանթարները լինում էին ամբողջ նահանգի համար, իսկ երկրորդականները միայն մի գաւառի կամ քաղաքի։ Այն երկիրների համար, որոնցում հայերը մեծամասնութիւն էին կազմում, քեալանթարները նշանակւում էին հայերից թէ առաջին և թէ երկրորդ կարգի։

Քեալանթարների ձեռքի տակ էին մելիքները, որի պաշտօնն ըստ էութեան հաւասար է երկրորդական քեալանթարի պաշտօնին. մելիքը քաղաքի դատաւորն էր ու հարկահանը. յարքունուստ մելիքներին իրաւունք էր շնորհուած ծեծելու, բանտարկելու, տուգանելու, չարչարելու և ամեն ինչ բացի արևնհեղութիւնից. այս մելիքները ևս հայոց նահանգներում հայերից էին լինում։

Մելիքի պաշտօնը գոյութիւն ունէր նաև Օսմանեան Հայաստանի քանի մի նահանգներում, օր. Մուշի, Մոկաց, Ճատալու և այլ կողմերը, որոնք դարձեալ նշանակւում էին հայերից։

Մելիքների բնակութեանց կենտրոնը լինում էր գլխաւորապէս քաղաքներում, իսկ նոցա փոխարէն գիւղերը կառավարւում էին գիւղական ծերերի ձեռքով, որոնք ուղղակի կոչւում էին ռէիս կամ ռէս. սոքա էին իսկապէս ժողովրդեան իսկական տէրերը. սոքա էին դատում ծագած վէճերը, քննում յանցանքները և վճռում ամեն ինչ, իսկ անուղղանեբին ու անհնազանդներին ուղարկում էին մելիքների, իսկ ուր բէգեր կային՝ վերջիններիս մօտ։

Հայաստանի վրաց մասը, որ նոցա լեզուով Սոմխէթ էր կոչւում, և որ պարփակում էր իւր մէջ Մեծ Հայքի հիւսիսային կողմը՝ Ուտի, Գուգարաց մեծ մասն ու Արցախի մի մասը, կառավարութեան կողմից որոշ սիստէմի չէր ենթարկւում, մանաւանդ որ վրաց արքայի և Երևանի խանի միջև երկար տարիներ տեղի ունեցող անբաւականութեանց և Հերակլի ու լեզգիների քանիցս դէպի Այրարատեան դաշտն արշաւելու պատճառով՝ երկիրը միշտ սասանման և ահուդողի մէջ էր և ոչինչ կանոնաւոր վարչութիւն մուտք գտած չէր այնտեղ։

Թէպէտև Հայաստանը այսպիսով բաժանուած էր երեք տէրութեանց մէջ, բայց իսկապէս ասած իւրաքանչիւր փաշայ, խան կամ նոյն իսկ մելիք, կարելի է ասել, կիսանկախ վասսալական տէր էր իւր երկրում, նշանաւոր խնդիրներում և հարկ տալու դէպքում միայն կախումն ունեցող պետութիւնից։ Իսկ քիւրդ բէկերն ու աղաները տիրացել էին գրեթէ մեր նշանաւոր վանքերից մեծ մասին, նոցանից շատերը բնակարան և հովասուն ամարանոցներ էին շինել հէնց վանքերի մօտ և ապրում էին այդ վանքերի ու շրջակայ հայ ժողովրդի հաշուով. նոքա հարկ էին առնում հայ վանքից, ուխտաւորներից, շրջակայ գիւղացիներից և կարևոր դիպուածում հաւաքում տանում էին վանքի ունեցած բոլոր հարստութիւնը, հալում էին, և այս շատ անգամ բռնի նոյն իսկ վանքի առաջնորդի ձեռքով, վանքի հազարամեայ սրբութիւնները, երբեմն դրամ գործածում սրբազան անօթներից ստացած ոսկին ու արծաթը և եթէ ընդդիմութիւն էր ծագում առաջնորդի կամ ժողովրդի կողմից՝ այս անգամ արդէն—հրդեհւում էր և վանքը և նորա բոլոր ստացուածքը, իսկ առաջնորդը սպանւում, կամ գերի տարւում։

Ներքին պատերազմները, փաշաների ու խաների հարստահարութիւնները, բէգերի ու աղաների կեղեքումներն ու սոսկալի վարմունքը գիւղական ժողովրդեան հետ, և աւելացնենք սորա վերայ ներքին խռովութիւնները, որ այդ շրջանում բուռն զօրութեամբ երևան եկան Ղարաբաղի մելիքների կողմից, այդ ամենը վայելչութիւնից զրկեց Հայաստան աշխարհը, բազմամարդ և ծաղկած հայ քաղաքները անշքացան, բազմաթիւ գիւղեր հիմնայատակ եղան ու կործանուեցան, հայ ժողովրդի մի մասը փլատակների ներքոյ մնաց, մասամբ գերի տարուեցաւ և մասամբ սկսաւ հեռաւոր երկիրներ գաղթել, ուր առաւել ազատ կարող էր պահպանել իւր ընտանեկան սրբութիւնը, պաշտել իւր ազգային եկեղեցին և ուր ապահով էր իւր արեան քրտինքով վաստակած օրուան հացը։

Այսպիսի մի խառնաշփոթ վիճակում հայի միակ յոյսն ու ապաստանարանը մնում էր իւր եկեղեցին. ամենքը և ամեն կողմից դիմում էին Հայաստանեայց եկեղեցւոյ պետին, որի ձայնը գիտէր մեղմացնել և վերացնել հալածանքները, և ամոքել լքեալ սրտերը։ Ս. Էջմիածնի Գահակալի պարտաւորութիւնը կրկնապատկուած էր ու եռապատկուած այդ միջոցին. նա պէտք է հոգեպէս մխիթարէր իւր զաւակներին, միւս կողմից պէտք է միջնորդ լինէր խաների, փաշաների, բէգերի ու աղաների առջև իւր սիրեցեալ հօտի նեղութիւններն ու հալածանքները թեթևացնելու համար, նա պէտք է հոգար իւր անպատսպար ժողովուրդը սպատսպարելու ու աւերած վանքերը վերանորոգելու և պայծառացնելու, բացի դորանից նա պէտք է միջոցներ գտնէր շահելու հայաստանին իշխող պետութեանց սրտերը և այնքան բազմաթիւ երկրորդական իշխանաւորների՝ խաների, փաշաների, քիւրտ բէկերի ու աղաների և այլ ազդեցիկ անձանց աչքը քաղցրացնելու դէպի հայ ժողովուրդն ու Մայր Աթոռը, իսկ ցիրուցան հայ ժողովրդի սրտերը վերջինիս հետ սերտ կապելու համար։

Այս գրութեան մէջ էր ապաքէն աշխարհն ու ժողովուրդը, երբ պա լորուած էր մի ծանր դեր խաղալ ջանկալիշատակ Տ. Սիմէոն Երևանցի Կաթողիկոսը, որի համառօտ կենսագրութիւնը հրատարակում ենք այստեղ։

ԳԻՒՏ ՔԱՀԱՆԱՅ ԱՂԱՆԵԱՆ
(Կը շարունակուի)։

ՍՈՒՐԲ ՍԱՐԳԻՍ ԶՕՐԱՎԱՐԻ ՏՕՆ ԱՌԻԹՈՎ

—

Ս. Սարգիս զօրավարի յիշատա և նրա գործերի արժանաւորութ դարերի ընթացքում ամենասերտ պերով կապուած է մեր գաւառա բնակչութեան մտքի ու գաղափ հետ։ Նա յայտնի է գաւառական ժ վրդին «աղենահաս», «քոզ (սպիտ ձիաւոր» և այլ մականուններով։ Ն յիշատակը յարգելու համար գի կան հայ ժողովրդի մեծամա թիւնը, մանաւանդ պառաւ կա իբրև նախնական աւանդութ մի առանձին պատկառանքով դիմաւորում նրա տօնին, պահ նոյն իսկ ծոմապահութեամբ ան նելով Ս. Սարգիս զօրավարի առ պահոց շաբաթը (Առաջաւորաց)։ միայն գիւղերում այլ և շատ հայ բնակ և վրացաբնակ քաղաքներ ևս Ս. Սարգսի տօնի օրը մեծ ուր է լինում։ Թիֆլիզը այդ օրը հանդ սաւոր ուխտ է կատարում իւր Սարգիս եկեղեցում։

—

Սարգիս զօրավարը Գամրաց գաւառ

Կիրակէ, փետրվարի 13-ին, լեհական լեզուով մի ներկայացում է լինելու «Երաժշտական կրուժօկ» կոչուած ժողովարանի բեմի վրայ։

⁂

ՀԱՅ ԹԱՏՐՈՆԻ ԱՊԱԳԱՆ

1879 թուականին Թիֆլիզ քաղաքը առաջին անգամ հայոց մշտական թատրոնական խումբ ունեցաւ, որ մեծ յաջողութեամբ առաջ տարաւ գործը 1879 թուից մինչև 1882 թուի մայիս ամիսը։ Այդ երեք սեզոնումն էլ թատրոնական գործը գտնւում էր բաւական հմուտ կառավարչի ձեռքում, և թատրոնը ամեն տարի նորոգելով իւր ոյժերը կարողացաւ գրաւել ժողովրդին դէպի հայկական թատրոնը։ Ռուս տաճկական պատերազմը նոր էր վերջացել. եթէ ամբողջութիւնը վրդովւում է պատերազմից, բայց և շատերը հարստանում են պատերազմի շնորհիւ, և ահա այդ հարստութիւն ձեռք բերողները շտապում էին իրանց ընտանիքներով Կովկասի զանազան կողմերից Թիֆլիզ, Կովկասի մայրաքաղաքը՝ հանգստանալու իրենց կրած ծանր նեղութիւններից և չարչարանքներից։ Նոր էր վերջացել և Բերլինի վեհաժողովը, ուր հայկական խնդիրը պաշտպանութիւն էր գտել եւրոպական մեծ տէրութիւնների կողմից և հայերը ոգևորուելով կարծում էին թէ արդէն մօտ է Տաճկա-Հայաստանի վերածնութիւնը, մի խօսքով բոլորեքեանքս մի տեսակ յարուած, ուրախ դրութեան մէջ էինք և գրպաններիս մէջ փող կար։

Յայտնի բան է առաջի անգամից առանց իմանալու թէ ով է Ադամեան, Աստղիկ, Սիրանոյշ — բոլորեքեան դնում էին թատրոն լոկ իրենց հետաքրքրութիւնը յագեցնելու. յետոյ դերասանական ոյժերն էին գրաւում դոցա թատրոն և վերջիվերջոյ շատերը այնքան ընտելացան թատրոնի գաղափարին, որ ամենայն հինգշաբթի անյայտ ոյժով մղվում էին դէպի թատրոն։

Հայ դերասանների և թատրոն յաճախող ինտելիգենտ հասարակութեան մէջ մի տեսակ կապ հաստատուեց. հասարակութեան ընտիր մասը միշտ լինում էր թատրոնում և մինչև իսկ շատերը հայ դերասաններին իրանց տները հրաւիրում. դոցա խորհուրդներով հայ դերասանները ծանօթանում էին եւրոպական ռեպերտուարի լաւագոյն պիեսների հետ. նոքա խրախոյս էին ստանում ամենայն կողմից բարոյապէս, աշխատում էին նոցա նպաստներին. խնջոյքներ էին կազմում ի պատիւ նոցա և այլն, և այլն. մի խօսքով սերտ կապերով կապում էին նոցա իրանց հետ։ Թատրոնը միշտ լիքն էր և այժմեան Արաբիայի անապատը չէր ներկայացնում։ Այդպիսի յաջող պայմաններում գտնուելով դերասաններն էլ բընականապէս ոգևորուում էին, քաջալերւում էին, աշխատում էին փայլել ժողովրդի առաջ իրանց տաղանդով։ Համաշխարհային թատրոնի պատմութիւնը ցոյց է տալիս որ նորա սկսուելու ժամանակ թատրոնը միշտ եղել է մի որևէ նշանաւոր մարդու հովանաւորութեան տակ. հարուստ մեծատունները միշտ աշխատել են օգնել թատրոնին թէ իրանց բարձր դիրքով զանազան արտօնութիւններ ստանալու դերասանների և թատրոնի համար և թէ իրանց դրամով։ Այդ տեսակ օրինակներով մանաւանդ լի է ֆրանսիական թատրոնի պատմութիւնը, որտեղ դերասանները զրկուած էին շատ քաղաքացիական իրաւունքներից, մինչև անգամ քրիստոնէական թաղման չէին արժանանում։ Ֆրանսիական թատրոնը միշտ եղել է զանազան արիստակրատների և մինչև անգամ թագաւորի հովանաւորութեան տակ։

Երբ Թիֆլիզի թատրոնն սկսուեց, նորա ղեկը դարձեալ Թիֆլիզի յայտնի մարդկանց ձեռքումն էր, որոնք մեծ անուն ունէին հասարակութեան մէջ։

Չնայելով որ այդ ժամանակ թատրոնը միշտ լիքն էր լինում, չնայելով մեր չիշած յաջող հանգամանքներին, թատրոնը երեք տարուայ ընթացքում տալիս է մեծ դրամական վնաս. և յետոյ փակվում է։ Ոմանց ասելով թատրոնն այդ ժամանակ փակուեց լոկ ինտրիգներից. բայց այդ սուտ է. պատճառն այն էր որ թատրոնի կառավարիչը չէր նորոգում ոյժերը (և որտեղից նորոգէր), ռեպերտուարը միևնոյնն էր և գլխաւորը - փող չկար։ Պօլսից՝ որքան ոյժեր կար բերել էին, այստեղ նոր ոչ ոք չերևաց, բայցի այժմեան դերասան Պետրոսեանից, որ իւր միջնակարգ ուսումն աւարտելով գնաց Պետերբուրգ իւր սիրած գործն ուսումնասիրելու համար։ Առածն ասում է՝ «չկայ չարիք, առանց բարիքի». հանգուցեալ Ադամեանը թողնելով Թիֆլիզը գնում է Ռուսաստան և աւելի յաջող պայմանների մէջ լինելով, սկսում է ուսումնասիրել իւր սիրած հերոսներին և արուեստը և այնպիսի հռչակ է ստանում, որ միմիայն վայելում էին եւրոպական կորիֆէյները — Ռոսսի, Սալվինի, Կոկլէն, Բարնայ։

Իսկ մեր քնքուշ սեռի տաղանդաւոր ներկայացուցիչները... Ոմանք վերադարձան Բոսֆորի սքանչելի ափերը, ոմանք Զմիւռնիա, և այնտեղ ասիական քնի մէջ մոռացութեան տուին իրանց սկըսած գործը։ Ինչ ասենք մեր դողտրիկ Վ. Գարակաշեանի համար, որ այդպէս վաղ թաղեց իւր մեծ տաղանդը, նա մեծ ապագայ ունէր, սակայն արևելեան ծուլութիւնը քիչ մարդ չէ մեռցրել... Ի՞նչ ասենք մեր անմոռանալի Մնակեանի մասին, որ թէպէտ չթողեց իւր արուեստը — բայց շարունակելով գործը տաճկական անճաշակ բեմի վրայ, յետադիմել սկսեց։ Երբ մի քանի տարի առաջ ես նորան տեսայ Գատիկէոյ բալագանում (թատրոն չէ կարելի անուանել) երկու երեք մելօդրամներում—լացս եկաւ, չիշելով թէ որքան հիանալի էր խաղում նա Փամուսովի, Գորոտնիչիի դերերը՝ բոլորովին անձնաւոր լինելով ռուսական կեանքին։ Վերջապէս վերցնենք մեր այժմեան տաղանդաւոր հիւր տ. Հրաչեային... Սա ևս 12 տարուայ ընթացքում ոչինչ չէ աւելացրել իւր ռեպերտուարին։ Վերցնենք նոյնպէս մեր մեր յարգելի տաղանդաւոր Ամիրան Մանդինեանին և Տէր-Դաւթեանցին... Ամիրան Մանդինեանցը շատ յարմարութիւններ ունէր յայտնի լուրջ կոմիկ (comique serieux) դառնալու. ինքը զարգացած մարդ լինելով, միշտ ամենայն դերից մի տիպ էր ստեղծում։ Տէր-Դաւթեանը այնպիսի մի տաղանդ է, որ հազիւ է գտնվում... բայց...

Չորս տարուց յետոյ այսինքն 1886/87 թ. սեզոնին հայոց թատրոնը պահում են պ. պ. Փիթոյեան, Փրիդոնեան և Մանթաշեան, որոնք սեզոնի վերջին կրում են մօտ 4000 ռ. վնաս։ Այդ սեզոնը նշանաւոր էր նորանով, որ հանգուցեալ Ադամեանը թէև աւելի կատարելագործուած վերադառնալով Ռուսաստանից, այնտեղ մեծ հռչակ ստանալուց յետոյ— խաղալով Շէքսպիրի ողբերգութիւնները— չէր գրաւում ժողովրդին դէպի թատրոն։ Առաջի սեզոնին երբ նա խաղում էր մելօդրամներ զանազան «Արեան բիծ», «Լիւսի Դիդիէ», «Լօնդրայի Աղքատներ», աւելի մուտք էր լինում, քան «Արքայ Լիր» «Օթէլլօ» «Ուրիէլ Ակոստա» ներկայացումներից...

Երեք տարուց յետոյ գլխաւորապէս մամուլի մի քանի հայ երիտասարդների շնորհիւ դարձեալ թատրոնը գոյութիւն է ստանում և ահա երրորդ սեզոնն է որ շարունակում է իւր գործը

1891/92 սեզոնին բացի ժողովրդից հաւաքած փողերից կրում է վնաս 230 մանէթ, այսինքն ընդամենը մօտ 3000 մանէթ. երկրորդ սեզոնին—92/93 մօտ 2400 մանէթ։ Այդ սեզոնի հաշիւը պէտք է պարզել. Լրագիրներում տպուեցաւ որ անցեալ տարուայ ղեկավարները ունեցել են մօտ 240 զուտ արդիւնք, որով գնել են մի տոմսակ. Այդ ճիշդ չէ, և ահա ինչ պատճառով. ընդունուած է վերջին բարեկենդանի շաբաթ օրը տալ պարահանդէս թատրոնի միւս սեզոնի համար կամ ֆոնդի. միշտ այդպէս եղել է, և 91/92 թ. ղեկավարները 92 թ. պարահանդէսից մօտ 700 ռուբլի յատկացրին 92/93-ին. բայց անցեալ տարուայ ղեկավարները պարահանդէսի մուտքով ծածկեցին իրենց անձնական վնասը։ Մենք հաստատ աղբիւրներից գիտենք որ այս տարուայ ղեկավարները՝ չնայելով ահագին վնասին, դարձեալ մտադիր են պարահանդէսից եկամուտը յատկացնել հետևեալ սեզոնին։ Բացի վերոյիշեալ պարահանդէսից գոյացած եկամուտից անցեալ տարուայ ղեկավարները վերցրին մօտ 1500 մանէթ թատրոնի 35 ամեայ յոբելեանից ..

Հին [illegible]։

(Վերջը հետևեալ համարում)։

ՄԱՄՈՒԼԻ ՏԵՍՈՒԹԻՒՆ

⁂ Կ. Պօլսի թուրք լրագիրները հաղորդում են, որ բացի արաբերէն, պարսկերէն և թուրքերէն լեզուով հրատարակուող իսլամական թերթերից — անգլիերէն լեզուով չորս հանդէս է հրատարակվում, որոնց նպատակն է իսլամութիւն քարոզել աշխարհին։ Սոցանից երկուսը, այն է «Հիլալ» շաբաթաթերթը և «Իսլամական աշխարհ» ամսագիրը հրատարակւում են — Անգլիայում, երրորդը՝ «Մուհամեդին» — Բոմբէյում և չորրորդը՝ «Իսլամութիւն» — Նիւ-Եօրկում։ Տաճկերը բերկրութեամբ հաղորդում են նաև որ Լիվերպուլում մահմեդականութիւն ընդունող անգլիացիների թիւը հետըզհետէ աճում է։ Այս առիթով աստուածահաճոյ մի հայ լրագիր սրամտութեամբ նկատում է.

«Աւելի լաւ չէ՞ր անել միսիօնարական ընկերութիւնները, որ փոխանակ մեծամեծ ծախքեր անելով միսիօնարներ ուղարկելու մինչև Հայաստան որ քրիստոնէութիւն քարոզեն այնտեղ, Լիվերպուլ ուղարկէին մի քանի միսիօնար։

⁂ «Արարատը» փոխել է իւր ձևը. յունվարից այս ամսագիրը երկէջ և մեծ դիրքով է հրատարակւում։ Ճակատի այն պատկերը, որի վրայ Ս. Էջմիածնայ տաճարը հազիւ նշմարելի էր՝ տեղակալութեան օրով «յետին պլանը» տեղափոխուած լինելով, նոյնպէս փոփոխութեան պէտք է ենթարկուի. ահա թէ այս առիթով ինչ է ազդարարում ամսագրի տեսչութիւնը.

«Արարատի» կազմի և ճակատի համար պատրաստած է (են) նկարներ և ուղարկած Պետերբուրգ պատրաստելու (ուրեմն պատրաստածը պատրաստվում է), որ (երևի նկարները) ստացած չլինելով ստիպուեց դնել ներկայ փոքրագիր նըկարը (աւելի լաւ էր բոլորովին նկար չդնել, քան մի այնպիսի նկար զետեղել, ուր տաճարը երրորդական դեր է խաղում) և թէ կազմը թողել է առանց գեղարուեստական նկարի» («Արարատը» պատկերազարդ թերթ չէ, այլ ամսագիր է, որի կազմի համար գեղարուեստական նկարը մի աւելորդ շռայլութիւն է)։

«Արարատի» նոր ձևը նոյն իսկ առանց գեղարուեստական կազմի անշուշտ աւելի գեղեցիկ է, աւելի է յիշեցնում այդ ամսագրի սկզբնական գիրքը երջանկայիշատակ հիմնադրի ժամանակ, բայց հասարակութեան համար աւելի մեծ նշանակութիւն ունի ի հարկէ բովանդակութիւնը։ Այս կողմից խմբագրութիւնը իւր ազդի մէջ յայտնում է.

«Արարատի» յօդուածները կը խմբագրէ մի առանձին Յանձնաժողով (գլխատառ բնագրում), որին կաշխատակցեն (ո՞ւմ, «Արարատի՞ն» թէ «յանձնաժողովի՞ն») միաբանութեան ձեռնհաս անձինք (անդամներ) և ճեմարանի ուսուցիչներ։ Կընդունուի նաև կարող եւ գրագէտ անձանց յօդուածներ և նիւթաւոր գեղեցիկ բանաստեղծութիւններ» (իսկ յօդուածները նիւթաւոր չպէ՞տք է լինին)։

Սակայն լսում ենք, որ այդ խմբագրական յանձնաժողովը առաջին համարը հրատարակելուց յետոյ արդէն իսկ լուծուել է, կամ լուծուելու վրայ է.

Онъ отцвѣлъ, не разцвѣвъ,
Въ утрѣ пасмурныхъ дней!

Ուստի բովանդակութեան մասին կը խօսենք, երբ մի կանոնաւոր յանձնաժողով հաստատուի, ու՞ր խմբագրական գործունէութիւնը դէթ մի քանի ամիս շարունակուի։ Առ այժմ կը նկատենք, որ եթէ ապագայում ևս Մեսրովբ վ. Տէր-Մովսիսեանը շարունակելու է աշխատակցել «Արարատին», ապա թող թոյլ չտրուի նորան աղաւաղել վեհափառ հայրիկի խօսքերը։ Այսպէս նոր տարուայ ընդունելութիւնը նկարագրելով, Մեսրովբ վարդապետը հետևեալ խմբագրութեամբ է առաջ բերում Նորին Վեհափառութեան արտասանած խօսքերը.

«Թուել մի առ մի այստեղ այն պատճառները, որոնց շնորհիւ հոգևորականութիւնը փոխանակ յառաջադիմելու՝ յետադիմել է, յարմար չէ տեղն ու ժամանակը. յուսամ, որ ուրիշ առթիւ կարողանամ ձեզ բացատրել այդ ցաւալի երևոյթի հիմնական պատճառները (основныя причины этого прискорбнаго явленія).

Թող արժանայարգ հայր սուրբը քաջ գիտենայ, որ Նորին Վեհափառութիւնը աշխարհիս ժամանակակից ամենամեծ հռետորներից մէկն է և նորա ասածը՝ համախոհական խմբագրութիւնը սրբապղծութիւն է։

Մի երկրորդ նկատողութիւն. եթէ պ. Միաբանը պէտք է այսուհետև էլ շարունակէ իւր պատմական, հնագիտական, պօլեմիկական, ստուգաբանական, ազգագրական և այլ գիտնական յօդուածներով զարդարել «Արարատի» էջերը, թող նորակազմ խմբագրութիւնը յանձն առնէ դերանունների վերաբերեալ մի քանի դասեր տալ նորան։ Պ. Միաբանն անդադար ասում է իր յօդուածներում՝ «իմ կարծիքով», «ես լուսաբանեցի» և այլն։ Գիտնական աշխարհում համեստութիւնը թելադրում է «ես»-ի և «իմ»-ի փոխարէն գործ ածել «մենք» և «մեր» դերանունները։ Պ. Միաբանը, որքան և իրեն աշխարհի կենդրոն համարի, պէտք է ասէ «մեր (համեստ) կարծիքով» «մենք (փորձեցինք) լուսաբանել» և այլն։

Կարող ենք հաւատացնել, որ իսկական գիտնականները այդպէս չեն գրում և իր «ես»ը ամենուրեք կոխելը գիտնականի տգիտութեան նըշաններից մէկն է։

ՊԱՐՍԿԱՍՏԱՆ

ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ ՆՈՐ ԱՌԱՋՆՈՐԴԸ

Նորընտիր Առաջնորդի գալը. — Գիզուած խնդիրները. — Հանգամանքների փոփոխութիւնը. Ընտրական օրէնք.

Ամսիս 2/14-ին քաղաքս հասաւ Ատրպատականի թեմի նորընտիր առաջնորդ Գերաշնորհ Սուքիաս Արքեպիսկոպոս Պարզեանց։

Նկատի առնելով որ Ատրպատականի առաջնորդութիւնը պարզ մի թեմակալութիւն չէ, այլ կէս-պատրիարքութիւնը մը Ատրպատականի հայերին համար, ի հարկէ ընդհանուրի հետաքրքրութեան մի առարկայ կը լինէր այն կէտ, թէ ո՞վ պիտի լինի Դավրէժի առաջնորդն, որի իրաւասութեան ենթարկուած են Հայաստանի երեք բաժանմունքէ փոքրիկին վարչական, կրթական և եկեղեցական բոլոր խնդիրները՝ գըրեթէ անպայման իշխանութեամբ։

Գրիգորիս Արքեպ. Ադուանեանի դժբաղդ մահէն ետք որ տեղի ունեցաւ Երասխի ափը, դեռ չհասած իր թեմ, Վեհափառ Հայրապետը Դավրէժի առաջնորդ նշանակեց Գեր. Պարզեանց Սրբազանին, Դավրէժի հոգաբարձութիւններին հեռագրով և խնդրագրով արած դիմումներին համեմատ։

Նորընտիր Առաջնորդի մուտքը հանդիսաւոր եղաւ քաղաքին մէջ. Տեղական սովորութեան համեմատ կառավարութեան զանազան պաշտօնատուններէ, և հիւպատոսարաններէ կողմէն ետակ ձիեր (չաքիրներ) և կառքեր ուղարկուած էին, թարգմանների կամ քարտուղարների հետ։ Հայոց Առաջնորդին եղող պատիւները իրենց շուքով միայն Շահին և Գահաժառանգ իշխանին տրուելիք պատիւներէն ետ կը մնան, իսկ միւս պաշտօնեաներ և հիւպատոսներ չեն վայելեր Առաջնորդի համահաւասար պատիւը։

Քաղաքէն կէս ժամ հեռու, Աճի գետին քովը, մի տաղաւար պատրաստուած էր հանդիսի կարգադիր մասնախմբի հոգատարութեամբը, ուր

էր և ազգով հռովմայեցի։ Իւր արիական քաջութեան համար Մեծն Կոստանդիանոս թագաւորից կարգուած էր իշխան—ստրատելատ Կապադովկիայում և ապրում էր քրիստոնէական բարեպաշտութեամբ։ Քանդում էր կուռքերի մեհեանները և նրանց տեղ շինում էր եկեղեցիք. կործանում էր անշունչ կուռքերի բագինները և կանգնեցնում տէրունական խաչը։ Ամեն տեղ աշխատում էր բազմացնել քահանայից դասը և Քրիստոսի պաշտօնեաների թիւը։ Տուրք և ողորմութիւն էր տալիս կարօտեալներին և իւր գոյքից առատապէս բաշխում էր աղքատներին։

Բարեպաշտ Մեծն Կոստանդիանոսից յետոյ, երբ թագաւորում է ուրացողն Յուլիանոս, որի պիղծ և անարդար գործունէութեան դառնութիւնները անտանելի են դառնում ամենքին, Սարգիս զօրավարը ստիպուած է լինում թողնել այդ երկիրը։ Իւր ամբողջ ունեցածը բաշխելով աղքատներին՝ Սարգիսը իւր միակ որդու, Մարտիրոսի հետ, որ որբացած է լինում մօրից, մի սպիտակ ձիու վրայ նստած՝ չուում են դէպի արևելք, հայոց Տիրան թագաւորի մօտ ծառայելու նպատակով։ Բայց վերջինս տեղ չէ տալիս Սարգսին, երկիւղ կրելով Յուլիանոսից։ Այդ պատճառով շարունակելով իւր ճանապարհը Սարգիսն անցնում է պարսկական Խորասան քաղաքը՝ պարսից Շապուհ արքայի մօտ։

Սակայն Յուլիանոսն այս լսելով զօրքով պատերազմ է դուրս գալիս Շապուհի դէմ՝ նրա հետ կռուելու համար։ Նրա զօրքի թիւը 300,000 ի էր հասնում, բացի 1000 հոգի քրիստոնէական զօրականներից, որոնց հրամայում է յետ դառնալ, կարծելով որ մի գուցէ այդ քրիստոնէական զօրքերի վրայ բարկանան իրանց «չաստուածները» և այդպիսով յաղթուեն պատերազմի դաշտում...

Հասնելով մինչև Տիգրոն, Յուլիանոսը աւերեց այդ երկիրը, իսկ Շապուհը, որ այդտեղ էր այդ միջոցին՝ փախստական գնաց Խորասան, ուր տեսնելով Սարգսին շատ ուրախացաւ և պատուելով նրան՝ բազմաթիւ զօրքերի գլուխ նշանակեց, և իսկոյն ուղարկեց սահմանը Յուլիանոսի զօրքերի դէմ պահպանելու համար։

Այդ միջոցին, բացի իր պաշտօնը կատարելուց, Սարգիսը այնպիսի հմտութեամբ և իմաստութեամբ քարոզում էր զօրքին և դարձնում նրանց դէպի քրիստոնէական կրօնը, որ իւր հաւատարմութեանը յանձնած պարսից զօրքը բոլորովին հակուած էր դէպի Սարգսի հաւատը։

Սարգսի որդին, որ այդ միջոցին Խորասան էր գտնվում, կարօտելով իւր հօրը, Շապուհ արքայի հրամանով կամենում է գնալ հօր մօտ՝ նրան տեսնելու համար։ Բայց հասնելով Տիգրիս գետի մօտ՝ խեղճ պատանին գերի է ընկնում թշնամու զօրքին։ Լսելով այս տխուր համբաւը, Սարգիսն սկսում է ծոմապահութեամբ և պահօք աղօթել առ Աստուած, պատրաստ և ողջակէզ է անում և կերակրում աղքատներին ու կարօտեալներին։ Նա անդադրում կերպով այնքան է աղօթում, որ մինչև իր որդի Մարտիրոսին գերող թշնամիները յետ են վերադարձնում իրան, խոստովանելով թէ՝ «այն օրից, երբ գերի տարանք պատանիդ՝ անսպասելի մահ տարածուեց մեր բանակում և նրանք, որոնք գերեցին՝ բոլորը մեռան»...

Յուլիանոսից յետոյ հռովմայեցոց զօրապետները թագաւոր են կարգում Յոբիանոսին, և որ հաշտութիւն կապելով Շապուհի հետ՝ դարձաւ իր երկիրը, իսկ Շապուհը գնաց դէպի Խորասան և սկսեց զոհ մատուցանել տասներկու կուռքերին Մազանդարան քաղաքում։

Մի կարճ միջոցից յետոյ Շապուհի մօտ եկան մարդիկ, որոնք չարախօսեցին Սարգսին, իբր թէ նա ամբողջ զօրքը, որ իր մօտ ունէր, դարձրեց դէպի քրիստոնէական հաւատը և կամենում է ապստամբել արքայի դէմ... Այդ պատճառով Շապուհը կանչելով իր մօտ Սարգսին, սկսում է գովել, պատուել նրան և շնորհակալ լինել նրա քաջագործութիւնների համար։ Այլ և աւելացնում է որ Սարգիսը զոհ մատուցանէ կուռքերին... Հակառակելով Շապուհի կամքին Սարգիսը պատասխանում է. «Ես մի Աստուած եմ հաւատում, երկնի և երկրի Արարչին. մեծ ամօթ է [illegible] ասել, մանաւանդ անխօս կուռքերիդ ուրուականներին աստուած անուանել»։ Եւ սկսում է անարգել թէ կուռքերին և թէ կռապաշտներին։ Դրանից բարկանալով Շապուհն սկզբում կամենում է սպառնալիքներով հաւանեցնել Սարգսին իր դիտաւորութիւնը, բայց զուր է անցնում։ Ապա սկսում է մեծամեծ խոստումներով և պարգևներով շլացնելով փոխել նրա հաստատակամութիւնը, դարձեալ բոլորը ի զուր է անցնում։ Այլ ընդհակառակն Սարգիսը յանդիմանելով թագաւորի իւրաքանչիւր խօսքին պատասխանում է. — «Այդ կուռքերը, որոնց դուք ստիպում էք ինձ պաշտել, արարածների պատկերներ են, որոնք ոչ այլ ինչ են, եթէ ոչ ճարտարների ձեռագործներ»։ Այս ասելով հանդերձ Ս. Սարգիսը արիաբար յարձակվում է կուռքերի վրայ և իր ձեռքի [illegible] փշրում բոլոր պատկերները թագաւորի առաջ, մեծաւորների և ամբողջ բազմութեան ներկայութեամբ ..

Սաստիկ բարկութեամբ և վրդովմունքով ամբոխը թագաւորի հետ միասին իսկոյն թափվում են Սարգսի վրայ, քարշ են տալիս նրան և սարսափելի կերպով գանակոծում են, թէ փայտով և թէ բռունցքներով.. Այդ միջոցին խուռն ամբոխի յարձակմունքից պատանի Մարտիրոսը՝ Սարգսի սնդրանիկ որդին ոտքի տակ տրորվում է և մեռնում... Այս մահը տեսնելով Ս. Սարգիսը ուրախանում է և գոհ է լինում Աստծուց, որ իր որդին նահատակվում է յայտնի պատճառով... իսկ ինքը շատ ծեծուելուց յետոյ կապանօք բանտարկվում է, ուր թողնում են եօթն օր առանց մի կտոր հացի, այն նպատակով, որ սաստիկ սովածութիւնից ստիպուած լինի Քրիստոսին ուրանալ... Բայց երբ տեսնում են, որ ոչինչ բան չեն կարողանում թուլացնել նրա մէջ սուրբ հաւատի սէրը, այն ժամանակ հանում են նորան բանտից և կրկին ամեն ջանք գործ են դնում թէ սպառնալիքներով, թէ խոստումներով և թէ պարգևներով հաւանեցնել, որ դարձեալ ապարդիւն է անցնում։ Այդ բոլորից յետոյ հրամայեցին գլխատել նրան և երբ տարան գլխատման տեղը Սարգիսն աղօթում էր և բարեխօսում դէպի ամենակարողն Աստուած և խնդրում էր, թէ որոնք իր նահատակութիւնը և յիշատակը ուխտելով և պատարագելով կը յարգեն՝ ընդունելի և կատարելի նրանց խնդրուածքը։

Եւ ապա դահիճը կտրում է Սարգսի գլուխը...

Այդ միջոցին Սուրբ Սարգիս զօրավարի հաւատը և նրա հաստատակամութիւնը դէպի իր կրօնը տեսնելով նոյն իսկ օտար զինուորներից շատերը հաւատացին նրան, որոնցից թուով 14 հոգի նոյնպէս նահատակուեցին նրա հետ...

Ս. Սարգսի նահատակութիւնը կատարվում է պարսից Մազանդարանի մի վայելուչ դաշտավայրում, «Դաղման» կոչուած քաղաքի մօտ։ Նրա մարմինը, որ սկզբում թաղուած է լինում Համիան քաղաքում, հայոց մեծ վարդապետն Մեսրոպը տանում է Կարբի և հողին յանձնում, որի գերեզմանի վրայ մի հռչակաւոր վանք է կառուցանում։ Իսկ Ս. Սարգսի ատամներից մինը առնելով իր հետ տանում է Վրաստան և ամփոփելով մի փայտեայ խաչի մէջ՝ օծում է խաչը և կանգնեցնում է Գագա բլրի գագաթին, որը մինչև այսօր կոչվում է «Գագայ Սուրբ Սարգիս»։

Սուրբ Սարգսի տօնական շաբաթը գաւառական ժողովրդին յայտնի է իր [illegible] եղանակով։ Այդ պատճառով գիւղական ամբոխը մի առանձին հակումով և երկիւղածութեամբ է վերաբերվում դէպի այդ տօնը։ Հակառակ դէպքում, գիւղացիների կարծիքով, այդ զօրավարի հրամանով, նոյն տօնի օրը, «բուք ու բորան» կը լինի և բազմաթիւ մարդիկ կը խեղդուին...

Այդ տօնի նախկին օրը, այն է ուրբաթ երեկոյին, կանայք սովորութիւն ունեն [illegible] *) շինելու և այդ փոխինդը [illegible] **) շաղախելով պլդն սեղմում են մի ափսէում և այդպէս պահում, այն նպատակով, որ այդ իսկ գիշերը, երբ պիտի լուսանայ տօնի օրը, շաբաթ, Ս. Սարգիսը ընդունելով իր յիշատակը յարգողների աղօթները, վերաբերումը՝ կը բարեհաճէ իւր սիգապանծ «բոզ-ձին» քշել այդ ափսէի վրայով, որի մէջ սեղմուած խորհրդաւոր զանգուածի—[illegible] վրայ կը դրոշմուի նրա ձիու ոտի պայտով...

Բացի այդ գիւղական այն աղջիկները, որոնք ենթարկուած են լինում բաղդի ու ճակատագրի հարուածներին, նոյն տօնի երեկոյին, քնելուս հացի մի [illegible] են դնում իրանց բարձի տակին, և առաւօտը զարթնելով նոյն [illegible] պատառը դնելով դուրսը մի քարի վրայ՝ իրանք հեռուից նայում են տեսնելու՝ թէ մի որևէ թռչուն վերցնելով այդ նոյն պատառը, ո՞ր կտուրի վրայ վայր իջաւ, հէնց այդտեղ է իրանց ապագայ փեսացուն, իրանց ամուսինը..

Աւելի հետաքրքիրն այն է, որ անմիտ սիրահարները նոյն երեկոյ աղ՝ [illegible] են ընդունում, որ առանձին կերպով նպատակի համար թըխուած է լինում, որպէս թէ այդ աղի պատառը ուտելով գիշերը քնի մէջ, սաստիկ ծարաւելու միջոցին, քաղցը երազում, իրանց սիրահարները Սուրբ Սարգսի բարեխօսութեամբ խմելու ջուր կը մատուցանեն իրանց...

Գ. Ս.—եան

---

*) Խորոված ցորենից աղացած ալիւր է։

**) Մաթ՝ ռուփ, դօշապ (ПОТОКА)։

Առաջնորդ Սրբազանը կէսօրին մէկ ժամ յետոյ Հասնելով, իջաւ Հանգչելու և եկեղեցական Համազգեստը, վեղարը գնելու. ժողովրդի բազմութիւնը այնտեղ Հաւաքուած էր իրեն դիմաւորելու: Նորին Սրբազնութիւնն առանց երկար սպասելու ելաւ ճամբան շարունակել և փոխն ի փոխ նստելով քաղաքիս կառավարչի և անգլիական ու ռուսական Հիւպատոսների ղրկած չքկառքերը, կէս օրէն երեք ժամ անցած մտաւ քաղաք, 100-ի մօտ Հեծեալների ուղեկցութեամբ։ Նշմարելի էր սակայն որ կամ կարգադիր մասնախմբի պակասաւոր Հոգատարութեամբ և կամ ժողովրդի անվարժութեամբ Սրբազանի ուղեկից բազմութիւնը խառն և անկանոն մի ժխոր կը ներկայանար և բացի այդ, քաղաքի մուտքին առջև ուր պէտք էր կեդրոնանար ժողովրդի բազմութիւնը, Հետաքրքրքիրների ցանցառ մի թիւ կար միայն։

Եկեղեցուն առջև խմբուած էին քաղաքիս երկու վարժարանների երկու սեռի աշակերտներն իրենց ուսուցիչներով և վարժուՀիներով. Սրբազանը այդտեղ վար իջաւ կառքէն և երգեցիկ խմբի շարականովը առաջնորդուեցաւ նախ եկեղեցին, ուր երեկոյի սովորական պաշտօնը կատարուելէն ետք, Սրբազան Առաջնորդը բեմ ելաւ առաջին անգամ խօսելու իր ժողովրդին։

Քարոզը, ինչպէս որ Սրբազան բեմասացն ինք դասաւորեր էր, երեք մասէ կը բաղկանար. Ողջոյն ժողովրդին, շնորՀակալութիւն դիմաւորողներին և պաշտօնական մարմիններին՝ իրեն եղած պատիւներին Համար և երդումն՝ իր նոր թեմի ժողովրդի բարօրութեանն ու պաշտպանութեանը Համար մինչև վերջին շունչ անձնուիրաբար աշխատելու: Քարոզին բարեմաղթութիւններ ալ ընկերացան վեՀ. Շահի և իւր բարձրր պաշտօնեաների կեանքի երկարութեան, ինչպէս և Հիւպատոսների ներկայացուցած վեՀապետներին Համար։

Սրբազանի քարոզը լաւ տպաւորութիւն թողեց ժողովրդին վրայ: Անկէ ետք մասնաւոր և խմբական ընդունելութիւնների ժամանակ ալ Սրբազանի յորդորներն այդ տպաւորութիւն աւելի Հաստատեցին։ Թէ քարոզի և թէ մասնաւոր խօսակցութիւնների մէջ Սրբազանը յատուկ խնամ տարաւ իր կրօնական և ազգային Հայեացք պարզելու, ասելով որ ինք Հայ ազգայնութեան պաՀպանումը ազգային եկեղեցու պաՀպանումէն և պայծառութենէն անբաժան կըմբռնէ:

Մենք կը յուսանք որ նորընտիր առաջնորդը — ժողովրդի խոնարՀ դասի այդ զաւակ, ինչպէս որ ինքը պարծանքով յիշեց, ժողովրդական գաղափարներով այնչափ ոգեւորուած կը լինի որ եկեղեցու պայծառութիւնը և պաՀպանումը միայն քարեղէն շինուածների և պաշտօնեաների մասին չըմբռնեն, այլ բանաւոր եկեղեցուն, այսինքն բուն իսկ քրիստոնեայ և բազմաչարչար ժողովրդին աւելի կ'ակնարկեն իր խօսքեր, անոր բարոյական վէրքեր դարմանելը, անոր արտասուք սրբելը պիտի գրաւեն իր բոլոր Հոգածութիւն:

Աւելցունենք նաև որ Դավրէժի նորընտիր թեմակալի տարիք 50-էն քիչ աւելի կը լինի. ինքը բարձրաՀասակ է և վայելուչ կերպարանքով ու պատկառելի մօրուքով, մի պարագայ, որ իր նշանակութիւնն ունի՛ այս երկրի մէջ, ուր սպիտակ մօրուքը յարաբերութիւնների մէջ մեծ դեր կը կատարէ ազդելու Համար:

(Կը շարունակուի)

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՄԻ ՆՈՐ ՆԱՒԱՏՈՐՄԻՂ ՄԻՋԵՐԿՐԱԿԱՆՈՒՄ

Վերջին ժամանակներն արտասաՀմանի մամուլն անընդՀատ տեղեկութիւններ է Հաղորդում Ռուսաստանի դիտաւորութեանց մասին Միջերկրական ծովում մի որոշ դիրք Հաստատելու վերաբերութեամբ: Մի ժամանակ լուր տարածուեցաւ, իբր թէ Ռուսաստանը կամենում է գնել Յունաստանից Պորոս կղզին՝ այնտեղ Հաստատուն նաւաՀանգիստ ունենալու Համար. այժմ էլ Հաղորդում են թէ Աթոն լեառն է, որտեղ ռուսաց կառավարութիւնը մտադիր է ամրացրած կայան Հաստատելու: Այսպէս թէ այնպէս՝ արտասաՀմանի մամուլը կարևորութիւն է տալիս ռուսաց նաւատորմղի Միջերկրականում Հաստատուելու խնդրին և գուշակութիւններ է անում ապագայի մասին քաղաքական Հաւասարակշռութեան տեսակէտից: Արդարև մի նոր մեծ պետութեան Հաստատուն դիրք ստեղծելը Միջերկրականի ջրերի վրայ չէ կարող իւր որոշ նշանակութիւնը չունենալ միջազգային քաղաքական յարաբերութեանց նկատմամբ. այս Հայեցակէտից ծովային ազդեցիկ տէրութիւնները, օրինակ Անգլիան, չեն կարող Հանգիստ Հոգով իրանց նաւերի կողքին մի նոր պատերազմական նաւատորմիղ տեսնել: Միանգամայն բնական պէտք է Համարել ուրեմն այն շարժումը, որ սկսուած արդէն Անգլիայում բրիտանական նաւատորմիղը զօրացնելու Համար: Անգլիայի դերը Միջերկրականում միշտ ազդեցիկ ու տիրապետող է եղել, և նա ամենայն ջանք գործ է դնում իւր այդ նշանակութիւնը պաՀպանելու:

ԳԵՐՄԱՆԻԱ.–Լրագրների Հաղորդած լուրը Վիլհելմ կայսեր՝ Բիսմարկին Ֆրիդրիխսրուէում այցելութիւն անելու մասին ստուգուեցաւ. Հեռագիրն այսօր տեղեկացնում է որ այդ այցելութիւնն արդէն կատարուած իրողութիւն է: Այն բոլոր մտերմական ցոյցերը, որ Վիլհելմ կայսրն անում է իշխան Բիսմարկին ահա երկրորդ անգամ այսպիսի կարճ միջոցում, այլ ևս տեղիք չեն կարող տալ կայսեր և նախկին կանցլերի Հաշտութեան անկեղծութեան մասին կասկածելու: Այսպիսով այդ Հաշտութիւնն առաւել ևս անդորրացուցիչ ազդեցութիւն պիտի անէ գերմանական Հասարակաց կարծիքի վրայ, որ այսուՀետև աւելի ու աւելի Համակիր պիտի լինի երիտասարդ կայսերը:

ԲՈՒԼՂԱՐԻԱ.—Սօֆիայից Հեռագրում են Frankfurter Zeitung-ին որ Ռումինիայի ու Բուլղարիայի միջև բանակցութիւններ են տեղի ունենում բուլղար-ռումինիական պատերազմական դաշն կռելու մասին: Այդ դաշնակցութիւնը թէ պաշտպանողական և թէ յարձակողական է լինելու:

«ԱՐՁԱԳԱՆՔԻ»

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԵԱՆ

Փետրվարի 8-ից.

ՖՐԻԴՐԻԽՍՐՈՒԷ.—Ճաշի միջոցին կայսեր մէկ կողմը նստած էր իշխան Բիսմարկը, իսկ միւս կողմը՝ իշխանուհին, երեկոյեան Հրավառութիւն կար. ճաշից յետոյ երկար խօսակցութիւն ու զրոյց տեղի ունեցաւ: 9 ժամին կայսրը մեկնեց:

ՓԱՐԻԶ.—Այսօր, վաղ առաւօտեան, Սէն-Ժակ փողոցի կաՀաւորուած սենեակներից մէկում մի ռումբ պայթեց: Ռումբը թողել գնացել էր մի ճանապարՀորդ. նա եկած էր երէկ առաւօտ և շուտով Հիւրանոցից գնացել: Հիւրանոցի տիրուՀին, տիկ. Կալիբրէզի տեսնելով որ ճանապարՀորդը չէ վերադառնում, փորձեց սենեակի դուռը բանալ, բայց այդ չէր յաջողվում և նա կանչեց ոստիկանին, մի քանի անձինք ոստիկանի Հետ միասին բարձրացան և երբ նա բացեց դուռը, մի իր, որ նման էր սարդինների արկղի, վայր ընկաւ և անմիջապէս պայթիւն տեղի ունեցաւ: Ռումբի կտորներով վիրաւորուած են տիկ. Կալիբրէզին և էլի երկու մարդ:

Փետր. 9-ից

ՓԱՐԻԶ. Faubourg Saint-Martin» փողոցի վրայ եղած «Espérance» Հիւրանոցում, այս առաւօտ մի ռումբ է գտնուած նման այն ռումբի, որ պայթեց Սէն-Ժակ փողոցի կաՀաւորուած սենեակում, բայց «Espérance» Հիւրանոցում պայթիւն չառաջացաւ:

ԼՈՆԴՈՆ. — Համայնքների ժողովում Ասկվիտը յայտնեց, որ մինչդեռ բոլոր պետութիւնները իշխանութիւն ունին վտանգաւոր անձնաւորութիւններին երկրից արտաքսելու, անգլիական օրէնսդրութիւնը այս իրաւունքը չէ տալիս տէրութեան. ցամաքային պետութիւններից արտաքսուելով, վնասակար տարրերը ուղղվում են դէպի Անգլիա. այս ոչ բաղձալի երևոյթը չէ կարող սակայն, տէրութեան կարծիքով, թելադրել անգլիական օրէնսդրութեան մէջ փոփոխութիւններ անելու. բայց անգլիական տէրութիւնը պատրաստ է գործնական միջոցներով նպաստել միւս երկրներին Հասարակութեան թշնամիների դէմ մաքառելու: «Մեր կարծիքով, ասաց Ասկվիտը, ամենաօգտաւէտ միջոցը այս դէպքում այն կը լինէր, որ տէրութիւնները միմեանց փոխադարձաբար ազդարարութիւններ ուղարկէին վտանգաւոր անձինքների մասին:

ՓԱՐԻԶ.—Ազգային ժողովը մերժեց Հացի վրայ փոխադրական Հարկ սաՀմանելու առաջարկութիւնը:

ԼՈՆԴՈՆ.—Համայնքների ժողովն ընդունեց Գլադստոնի առաջարկութիւնը՝ յետ առնել գործարանատէրերի պատասխանատուութեան մասին ներկայացրած բիլլը: Գլադստոնը ասաց որ բանուորների աՀագին մեծամասնութիւնը Հաւանութիւն չէ տալիս լորդերի արած փոփոխութիւններին:

ՓԱՐԻԶ.—Հացի վրայ 7 ֆրանկ Հարկ սաՀմանելու առաջարկութիւնը ընդունուած է:

ՎԻԵՆՆԱ.—Այսօր յայտնուած է Օմլադինների գործին վերաբերեալ դատավճիռը: Մեղադրեալներից 8 մարդ, պետական դաւաճանութեան Համար, դատապարտուած են ծանր բանտարկութեան 2-ից մինչև 8 տարի, 6 մեղադրեալներ կարգը խանգարելու Համար 2-ից մինչև 18 ամիս ժամանակով բանտարկութեան, 11 մեղադրեալներ դատապարտուած են արգելման, 2-ը արդարացրած են:

ԶԱՆԱԶԱՆ

„Berliner Theater Almanach"-ը Հաղորդում է, որ Գերմանիայում դերասանների և դերասանուՀիների թիւը 14,000-ի է Հասնում: Եթէ սոցա վրայ աւելացնելու լինինք ստատիստներին, խորիստներին և բալէտի անդամներին, ապա թիւը Հասնելու 300,000-ի: Այս մեծ բազմութիւնը խաղում է 700 թատրոններում, որոնցից 24-ը գտնվում են Բեռլինում, 7-ը—Համբուրգում, 4-ը—Միւնխէնում:

Կայիրէում—վախճանուել է փետր. 1-ին (13) յայտնի գաշնակահար Հանս-Ֆօն-Բիւլովը:

Խմբագիր-Հրատարակիչ՝
ԱԲԳԱՐ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Բ. ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆԻ

(Կուկիա, Վորոնցովի արձանի Հանդէպ) Հիւանդներին ընդունում են ամեն օր, բացի կիւրակի օրերից:

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝

Բ. Ա. ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան և վեներական (սիֆիլիս) Հիւանդութիւնների:

Կ. Մ. ԶԻԿՈՎԱՆԻ—9—10 ժ. աչքի և նեարդային Հ.

Դ. Գ. ԲՈՒԴԿՈՎՍԿԻ—10—11 ժամը ներքին, երեխայոց և կանանց Հ.

Ի. Փ. ՊՐՕՏԱՍԵՒԻՉ—11½—12½ ժ. ականջի, կոկորդի, քթի և կրծքի Հ.

Կին-բժիշկ ՏՈՒՐԲՈՎԻՉ—12½—1 ժ. կանանց Հ.

Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—1½, ներքին և երեխայոց Հ.

ԵՐԵԿՈՆԵՐԸ՝

Ա. Գ. ԳՈՒՐԿՕ—6—7 ժ. Սիֆիլիսի և մէզի ու սեռական օրգանների Հ.

Բ. Ա. ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆ—7—7½ ժ.

Ի. Ե. ՖՐԱՆՑԻՈՒՍ—7—7½ ականջի, կոկորդի և քթի ու նեարդային Հ. եր կուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ:

Ա. Գ. ԳՈՒՐԿՕ ֆիզի-խոշորացուցական Հետազօտութիւն է անում մէզի, խխլի, արեան, կաթի և այլն:

Վճար 50 կ., Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի Համար առանձին:

Հիւանդանոցումը ընդունվում են և ԳԻՇԵՐՕԹԻԿ ՀԻՒԱՆԴՆԵՐ:

Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Նախասարդեան:

ՓՕՍՏԱՅԻՆ ԵՐԹԵՒԵԿՈՒԹԻՒՆԸ ՎՐԱՑ ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ՃԱՆԱՊԱՐՀՈՎ

Թիֆլիզից՝ Հինգ Հոգու տեղ ունեցող կառքը ուղևորվում է առաւօտեան 7 ժամին, գիշերում է Մլեթի կայարանում, Վլադիկավկազ է Հասնում Հետևեալ օրը ժամը 7-ին երեկոյեան:

Հինգ Հոգու տեղ ունեցող կառքը դարձեալ ուղևորվում է առաւօտեան 6 ժամին, գիշերում է Պասանաուր կայարանում, Հասնում է Վլադիկավկազ Հետևեալ օրը ժամը 10-ին երեկոյեան:

Վեց Հոգու տեղ ունեցող Հանրակառքը (օմնիբուս) ուղևորվում է կէսօրից յետոյ ժամը 3-ին և առանց գիշերելու տեղ է Հասնում Հետևեալ օրը ժամը 7-ին երեկոյեան:

Վեց Հոգու տեղ ունեցող Հանրակառքը (օմնիբուս) դարձեալ ուղևորվում է ճաշից յետոյ 5 ժամին և առանց գիշերելու Հասնում է Վլադիկավկազ Հետևեալ օրը 9 ժամին երեկոյեան:

Վլադիկավկազից՝ Հինգ Հոգու տեղ ունեցող կառքը ուղևորվում է առաւօտեան ժամը 7-ին, գիշերում է Մլեթի կայարանում, Թիֆլիզ է Հասնում Հետևեալ օրը ժամը 7-ին երեկոյեան:

Հինգ Հոգու տեղ ունեցող կառքը դարձեալ ուղարկվում է առաւօտեան ժամը 9-ին, գիշերում է Գուդաուր կայարանում, Հասնում է Թիֆլիզ Հետևեալ օրը ժամը 9-ին երեկոյեան:

Վեց Հոգու տեղ ունեցող Հանրակառքը (օմնիբուս) ուղևորվում է կէսօրից յետոյ ժամը 3-ին և առանց գիշերելու Հասնում է Թիֆլիզ Հետևեալ օրը ժամի 7-ին երեկոյեան:

Վեց Հոգու տեղ ունեցող Հանրակառքը (օմնիբուս) դարձեալ ուղևորվում է ճաշից յետոյ ժամը 5-ին և առանց գիշերելու Հասնում է Թիֆլիզ Հետևեալ օրը ½ ժամին երեկոյեան:

ՌՈՒՍԱՑ ՇՈԳԵՆԱՒԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ամեն շաբաթ շոգենաւերի երթևեկութիւն Բաթումի, Օդեսայի և Կ. Պօլսի միջև:

Բաթումից դուրս է գնում.

Շաբաթ օրերը (լոյս կիւրակի գիշերուա 2 ժ.) շրջանառու ընթացքով բոլոր նաւաՀանգիստները:

Կիրակի օրերը, գիշերուայ ժամը 11½-ին, խուճապ ընթացքով Եալտայի և Սևաստապօլի վրայով:

Երեքշաբթի օրերը լոյս չորեքշաբթի գիշերուայ ժամը 2-ին) շրջանառու ընթացքով բոլոր նաւաՀանգիստները:

Հինգշաբթի օրերը ցերեկուայ ժամը 12-ին ուղիղ ընթացքով Նովորոսիյսկի և Կերչի վրայով:

Կ. Պօլիս երկու շաբաթը մէկ անգամ երեկոյեան ժամը 7-ին:

Բաթում է դառնում.

Ուրբաթ օրերը երեկոյեան, շրջանառու ընթացքով բոլոր նաւաՀանգիստների վրայով:

Ուրբաթ օրերը առաւօտեան, խուճապ ընթացքով Սևաստապօլի վրայով:

Երկուշաբթի օրերը երեկոյեան շրջանառու ընթացքով բոլոր նաւաՀանգիստների վրայով:

Չորեքշաբթի օրերը առաւօտեան ուղիղ ընթացքով Նովորոսիյսկի և Կերչի վրայով:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԹԻՖԼԻԶԻ ԹԱՏՐՈՆ
Ուրբաթ, փետր. 11-ին.
Մասնակցութ. ՕՐ. ՊԱՊԱՅԵԱՆԻ
„ՊԻԿՕՎԱՅԱ ԴԱՄԱ"
Օպերա 3 գործ. երաժ. Չայկովսկու.
Լիզայի դերը կըկատարէ
ՕՐ. ՊԱՊԱՅԵԱՆԸ
Մասնակցողներ՝ օր. օր. Պապայեան, Կամինէր, Կարտավինա, Կապլան, Ֆինգերտ և այլք, պ. պ. Դեվիկէր, Սանդուրսկի, Շալեապին և այլք:
Երաժշտապետութիւն ՏՐՈՒՖԻԻ
Սկիզբն է 7½ ժամին: Վերջը մօտ 11 ժամին:
ԱԶԴ. Կիւրակէ, փետր. 13-ին, առաջին անգամ «Սեվիլեայի Սափրիչը», երաժշտութիւն Րոսսինի: 1—1

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ
Օ. ՋԻԲԵՐՏԻ
(№ 7, Դվօրցովայա փողոց, տ. Սարաջևի, № 7)
ՍՏԱՑՈՒԱԾ ԵՆ ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ
ԻՍԿԱԿԱՆ ՃԱՊՈՆԱԿԱՆ ՇԷՆՔԻ ԻՐԵՂԷՆՆԵՐ
ԱԼԲՕՄՆԵՐ, ԻՐԵՂԷՆՆԵՐ ՓՂՈՍԿՐԻՑ, ԿԱՇՈՒ
ԵՒ ՄԵԼԽԻՕՐԻՑ
(150—1

НА 1894 ГОДЪ.
ПРОДОЛЖАЕТСЯ ПОДПИСКА
НА ЕЖЕДНЕВНУЮ ГАЗЕТУ
„БАКИНСКІЯ ОБЪЯВЛЕНІЯ"
(около 360 номеровъ въ годъ)
ЕЖЕДНЕВНО ПЕЧАТАЮТСЯ СОБСТВЕННЫЯ ТЕЛЕГРАММЫ
(отъ „Сѣвернаго телеграфнаго агентства").
ПОДПИСНАЯ ЦѢНА:
Съ доставкою въ г. Баку: На 1 годъ . . . . 2 р. — к. ,, 6 мѣсяцевъ. . . . 1 р, 50 к.
Съ пересылкою по почтѣ: На 1 годъ . . . . 3 р. 5 ,, 6 мѣсяцевъ. . . . 2 р. -
ОТДѢЛЬНЫЕ НОМЕРА ПО 2 КОП.
ПЛАТА ЗА ОБЪЯВЛЕНІЯ:
За строку петита, отъ 1 до 3 разъ: на 1-й страницѣ 8 коп., на 4-й 6 к. трехъ разъ—по особой таксѣ. Годовыя объявленія: на 1-й страницѣ по 1½, на ней—по 1 коп. за строку петита. Ищущимъ труда и занятій и благотворительным реждeніямъ дѣлается 50%, казеннымъ учрежденіямъ 10% скидки. За годовыя о ленія въ 5 стр. петита въ отдѣлѣ „Адресъ-календарь", съ правомъ мѣнять текст раза, взим. 12 руб.
Подписка и объявленія принимаются въ конторѣ газ. „Бакинскія Объявле (Лалаевскій пр., помѣщеніе конторы типографіи Гюльбасарова и Шахбагова). фонъ № 123. (3—3)

ՍԱՐՊԻՆԿԱՆԵՐԻ ՎԱՃԱՌԱՆՈՑ
ՍԱՐԱՏՈՎԻ ԳՈՐԾԱՐԱՆԱՏԷՐԵՐ
ԲԷՆԴԷՐ ԵՒ ՍՏԵՊԱՆՈՎ
Առևտրական տուն
ՍՏԱՑՈՒԱԾ ԵՆ ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ
տաք շալեր բումազէյ և բումազէյից կարած տղամարդկանց շապիկ խանութում գտնւում է նոյնպէս բաւականաչափ սարպինկայի գուլպա գ:իւի փաթեթներ, թաշկինակներ և տղամարդու ղունաւոր շապիկ բազմատեսակ և բազմերանգ սարպինկաներից կարած:
Թիֆլիզ, Սոլոլակսկի փողոց: (30—29)

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ
1894 ԹՈՒԻ
ՀԱՅԵՐԷՆ ՀԱՏՈՒԱԾԱԿԱՆ (ՊԱՏԻ) ՕՐԱՑՈՅՑԸ
ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԵԱՄԲ
ՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ
Այս տարի առաջին անգամ լուսնի բոլոր երևոյթները, խ ւարումները և տարուայ եղանակները գրել ենք ֆիզիքական օրսէր վատօրեայի ամենաճիշտ եզրակացութեանց Համեմատ: Օրացոյ տպվում է գործարանից յատկապէս պատուիրած ընտիր թղթի վերայ

Գինը Հատով . . .	60 կ.
Ճան. ծախքով . . :	75 կ.
10-ից աւելի առնողին	10%
25 » » »	15%
100 » » »	20%
200 » » »	25%

Ճանապարհի ծախքը գնողի վերայ է:
Բադու վաճառւում է եղբ. Տէր-Յովհաննիսեանների վիմագր տպարանը:
Գէորգ Ջահուկեան Աշանեան

ՓԻԼԻՊՊՈՍ ՎԱՐԴԱՆԵԱՆԻ
ՀՐԱՏԱՐԱԿԱԾ ԳՐՔԵՐԸ

		Ռ.	Կ.
1)	Շմէդ, «Ֆրանկլին», 2 տպ. ոսկեւարթիւ. . .	—	40
2)	» «Վաշինգտօն», 2 տպ.	—	60
3)	» «Հոմերի Իլիականը», պատկերներով . .	1	—
4)	» «Հոմերի Ոդիսականը»	1	20
5)	Սմայլս, «Բնաւորութիւն»	1	50
6)	Ամիչիս, «Սիրտ»	1	—
7)	» «Ապէնիններից մինչև Անդէրը». . .	—	10
8)	«Ռուստէմ և Զօ՞րաբ».	—	20
9)	Շիլլէր, «Աւազակներ», ողբերգութիւն . . .	—	50
10)	Սմայլս, «Ինքնօգնութիւն»	1	50
11)	Տօլստոյ, «Ռօբինզօն», փոքրերի Համար. . .	—	20
12)	» «Կօլումբը», փոքրերի Համար . . .	—	15
13)	Հոյշէ, «Բէաթրիչէ», վէպիկ	—	30
14)	» «Նօնցայի բերդը», վէպիկ. . . .	—	30
15)	Շմէդ, «Թէյնեկէ աղուէսը»	—	60
16)	Վօլտէր, «Հաւատարիմ Սավիտրին» *). . .	—	10

Ճանապարհածախսը թարգմանչի վրայ է: Վաճառվում են թարգմանչի մօտ՝ Тифлисъ, Садовая, Маріино-Анановское училище, և կենդրոնական գրավաճառանոցում:

---

*) Հրատարակութիւն «Թ. Հ. Գր. Հրատարակչ. Ընկերութեան»

Дозволено цензурою. Тифлисъ, 10 Февраля 1894 года.
Տպարան Յ. Մարտիրոսեանցի
Типографія И. Мартиросіанца. на Орбел. ул., д. № 1—2